# ԱՇԽԱՐՀԻ ԿԵՆՏՐՈՆԸ

*Բեմը ներկայացնում է ընդարձակ մի բակ: Հին թաղամաս է Երևանում, որ հիմա հետզհետե քանդվում է: Մի կողմում արդեն երևում են ժամանակակից բարձրահարկ շենքերի ուրվագծերը: Բակի մեջտեղում դրված է մի սեղան: Գործողությունները հիմնականում դրա շուրջն են կատարվում: Բնականաբար տարբեր ընտանիքներ ու մարդիկ են ապրում այդ բակում՝ տնային տնտեսուհիներ, բանվորներ ու ծառայողներ: Կան նաև հիմնարկներ: Բեմի մի անկյունում գրասեղան է դրված: Յուրաքանչյուր հիմնարկի պետ, հանդես գալու ժամանակ, իր հիմնարկի ցուցանակը փակցնում է սեղանին:*

*Բեմի երկու կողմերում տների բաց պատշգամբներ են:*

*Ամառ է, ուշ առավոտ:*

**ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ**

*Բեմ է մտնում մի երիտասարդ: Նա ներկայացման մեկնաբանն է կամ ինչպես ինքն է անվանում իրեն՝ գիդը:*

ՎԱՀԱՆ – Լեդիներ և ջենտլմեններ, տիկնայք և պարոնայք, կամ մի խոսքով՝ հարգելի ընկերներ, դուք տեսնում եք Աշխարհի կենտրոնը: Ձեր առջև է մեր քաղաքի ամենահին թաղամասերից մեկը, որը նույնքան հին է, որքան արժանահիշատակ Կոնդը, Սարի թաղը կամ Անկախ մայլան: Բայց որովհետև ամեն հին բան դեռ հուշարձան չէ, Աշխարհի կենտրոնը ևս չի պահպանվում պետության կողմից: Այլ, ինչպես տեսնում եք՝ ընդհակառակը:

Թե ով է այս թաղամասին հեգնանքով Աշխարհի կենտրոն անունը տվել, հայտնի չէ: Հայտնի չէ նաև, թե իրո՞ք հեգնանքով է տրվել այդ անունը: Որովհետև իրենք՝ Աշխարհի կենտրոնի քաղաքացիները, միշտ էլ խորին հարգանքով են վերաբերվել իրենց բնակավայրի և իրենց սեփական անձի նկատմամբ:

Նրանք նույնիսկ գտնում էին, որ կարող են ապրել անկախ ու ինքնուրույն, առանց մյուս թաղամասերի հետ առնչվելու, որովհետև ունեն անկախ ապրելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Բնակվարչություն ունեն, սեփական քննիչ ունեն, լավաշի փուռ ունեն և դասախոս: Ժողդատավոր ունեն, անձնագրային մի ինստիտուտ ունեն, հիվանդանոց ունեն և հեռախոս, աշխատավոր ունեն և պորտաբույծ ունեն և բանաստեղծ ունեն և քաղքենի, երեխաներ ունեն և ծնողներ ունեն, դերասաններ ունեն և նույնիսկ գիդ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այդ գիդը ես եմ, հարգելի ընկերներ. աշխատանքից ազատ ժամերին այլ թաղամասերից եկած այցելուներին ծանոթացնում եմ մեր քանդվող թաղի դեռևս տեսարժան վայրերի և տեսարժան մարդկանց հետ: Նրանց մի մասին դուք երևի վերջին անգամ եք տեսնում. Դրանք հին թաղամասի հնացած բարքերի կրողներն են, և հիմա ավելի շատ կենցաղագրական նշանակություն ունեն: Այնպես որ ուշադրություն, սկսում ենք:

*(Հայտնվում է անձնագրային սեղանի պետը: Մոտենում է գրասեղանին: Փակցնում է տախտակը՝ «Անձնագրային սեղան». նստում ու նայում է գիդին):*

ՊԵՏ – Էլի դու էստե՞ղ ես, այ տղա, մեզանից ի՞նչ ես ուզում…

ԳԻԴ – Բարև ձեզ:

ՊԵՏ – Լսում եմ:

ԳԻԴ – Ասում եմ՝ բարև ձեզ:

ՊԵՏ – Հասկացանք: Ասում եմ՝ լսում եմ:

ԳԻԴ – Լավ: Ես ուզում եմ գրանցվել այստեղ:

ՊԵՏ – Այստե՞ղ:

ԳԻԴ – Այսինքն այս քաղաքում:

ՊԵՏ – Այս քաղաքում գրանցվել չի կարելի:

ԳԻԴ – Չէ, գիտեք ինչ, ես այստեղ եմ ծնվել, մեծացել, հետո մեկնել եմ Ալավերդի աշխատելու, այնտեղ ամուսնացել եմ: Հետո, մի խոսքով, իրար չհասկացանք… Ես վերադարձել եմ և կրկին ուզում եմ մեր տանն ապրել:

ՊԵՏ – Իսկ ձեր կի՞նը:

ԳԻԴ – Կինս ի՞նչ:

ՊԵՏ – Ձեր կինը համաձա՞յն է:

ԳԻԴ – Մենք դատարանով ենք բաժանվել: Ահա վճիռը: Խնդրեմ:

ՊԵՏ - *(Կարդում է վճիռը)* Համաձայն… Իսկ ինչո՞ւ եք բաժանվել:

ԳԻԴ – Ը-ը, դա զուտ անձնական հարց է:

ՊԵՏ – Անձնակա՞ն… Իսկ գուցե ձևականորե՞ն եք բաժանվել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳԻԴ – Դատարանի վճիռը ձեր ձեռքին է:

ՊԵՏ – Իսկ գուցե դատարանի վճիռն է՞լ է ձևական: Քի՞չ է պատահում:

ԳԻԴ – Գուցե և պատահում է, բայց սա օրինական վճիռ է…

ՊԵՏ – Իհարկե, ուրիշներինը ձևական է, իսկ ձերն օրինական…

ԳԻԴ – Լսեք, սիրելի ընկեր, ի՞նչ եք ուզում: Կնոջիցս պրծա, ձեզնից չե՞մ պրծնում: Լավ եմ արել՝ բաժանվել եմ: Ի՞նչ եք ուզում:

ՊԵՏ – Ես ոչինչ չեմ ուզում, կարծեմ դուք եք ուզում:

ԳԻԴ – Այո, գրանցվել եմ ուզում:

ՊԵՏ – Տեսնո՞ւմ եք: Իսկ Ալավերդիում որտե՞ղ էիք ապրում:

ԳԻԴ – Նախկին կնոջս տանը:

ՊԵՏ – Ուրեմն նախկին կին է՞լ եք ունեցել:

ԳԻԴ – Ոչ, սա: Եթե բաժանվել եմ, ուրեմն նախկին է:

ՊԵՏ – Իսկ ինչո՞ւ չշարունակեցիք այդ տանը մնալ: Ձեզ այնտեղ մի անկյուն հասնում է:

ԳԻԴ – Իսկ ես անկյուն չեմ ուզում, ես իմ տունն եմ ուզում, իմ տունը…

ՊԵՏ – Իսկ ինչո՞ւ եք բղավում:

ԳԻԴ – Ե՞ս… *(Հոգնած)* Ներողություն…

ՊԵՏ – Այդպես: Իսկ այստեղ որտե՞ղ եք ուզում գրանցվել:

ԳԻԴ – Մեր տանը: Հորս տանը: Սեփական տուն է:

ՊԵՏ – Բնակտարածությունը բավականացնո՞ւմ է:

ԳԻԴ – Բավականացնում է:

ՊԵՏ – Ո՞ր փողոցում է:

ԳԻԴ – Սարաջովի:

ՊԵՏ – Սարաջովի՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳԻԴ – Սարաջովի:

ՊԵՏ – Չի լինի:

ԳԻԴ – Ինչո՞ւ:

ՊԵՏ – Քանդվելու ենթակա է:

ԳԻԴ – Երբ ես դեռ չէի ծնվել, դարձյալ քանդվելու ենթակա էր:

ՊԵՏ – Դա ինձ չի վերաբերվում: Որոշում կա:

ԳԻԴ – Հա, բայց ես մեր տանն եմ գրանցվում:

ՊԵՏ – Դա արդեն ձեր տունը չէ:

ԳԻԴ – Ինչպե՞ս թե մեր տունը չէ:

ՊԵՏ – Որովհետև գրանցված չեք:

ԳԻԴ – Դե, ես էլ ուզում եմ գրանցվել:

ՊԵՏ – Քանդման ենթակա է:

ԳԻԴ – Բա ես որտե՞ղ պետք է ապրեմ:

ՊԵՏ – Որտեղ որ ապրել եք:

ԳԻԴ – Լսեք, ընկեր, քեռի ջան, հորեղբայր ջան: Ես ամբողջ կյանքում այդ տանն եմ ապրել: Ընդամենը մի տարի է, որ դուրս եմ եկել: Հիմա վերադառնում եմ:

ՊԵՏ – Ինչո՞ւ եք վերադառնում:

ԳԻԴ - *(Հուսահատ, դադար)*: Լավ, ես իմ ծնողների հետ իրավունք չունե՞մ ապրելու: Ասենք թե բանակ եմ գնացել:

ՊԵՏ – Բայց դուք բանակ չեք գնացել:

ԳԻԴ – Ասենք թե խոպան եմ գնացել, մեծ կառույցները, Սիբիր, գրողի ծոցը…

ՊԵՏ – Այնտեղ էլ գրանցվեք:

ԳԻԴ – Այնտեղ գրանցված էի: Հիմա դուրս եմ գրվել, ուզում եմ մեր տանը գրանցվել:

ՊԵՏ – Ձեր տունը քանդման ենթակա է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳԻԴ – Լավ, դե թույլ տվեք ուրիշ տեղ գրանցվել:

ՊԵՏ – Որտե՞ղ:

ԳԻԴ – Որտեղ ուզում եք:

ՊԵՏ – Ես ոչ մի տեղ էլ չեմ ուզում, դուք եք ուզում:

ԳԻԴ – Լավ, ես եմ… ես… Թեկուզ Անկախ մայլայում:

ՊԵՏ – Անկախ մայլան էլ է քանդման ենթակա:

ԳԻԴ – Օրինակի համար եմ ասում… Դե, թեկուզ Կրիվոյի փողոցում:

ՊԵՏ – Կրիվոյն էլ է քանդման ենթակա:

ԳԻԴ – Վայ, մեռնում եմ… Որտեղ ուզում եք…Չէ, որտեղ ես եմ ուզում… Գժանոցում, Մարսի վրա, Լուսնի տակ, Վեներայի կողքին… թե՞ դրանք էլ են քանդման ենթակա:

ՊԵՏ – Քանդման ենթակա են: Ի՞նչ… Չէ, դրանք քանդման ենթակա չեն…

ԳԻԴ – Ուրեմն որևէ տեղ, թեկուզ Նորքի զանգվածում:

ՊԵՏ – Նորքի զանգվածո՞ւմ: Սպասեք, սպասեք, դուք Երևանում մի տուն ունեք և ուզում եք երկրորդն է՞լ ունենալ:

ԳԻԴ – Ես չեմ ուզում… Դուք եք ուզում…

ՊԵՏ – Ե՞ս…

ԳԻԴ – Դե, տեսնո՞ւմ եք, ուրեմն կգրանցե՞ք Սարաջովում:

ՊԵՏ – Չեմ կարող, քանդման ենթակա է:

ԳԻԴ – Լավ: Բա ես ի՞նչ անեմ… Ալավերդուց եկա…

ՊԵՏ – Իսկ ինչո՞ւ Ալավերդուց եկաք…

ԳԻԴ - *(Որորվում է)* Որտեղի՞ց, ի՞նչ Ալավերդի… Ո՞վ… Ճիշտ որ, է, ինչո՞ւ… Հա, ես ու դու իրար չհասկացանք, եկանք Անկախ մայլա, հա… կինս Սարաջովում… Վեներայի վրա… Հայրս Նորքի զանգվածում, կտուրների վրա… Ես գրողի ծոցում… Դու…

Ուրեմն ո՞րն է հիմնական հարցը… Ընկեր ունկնդիրներ… Սպասեք, սպասեք, ես անպայման կհիշեմ… հա, գտա… Ալա բալա նիցա, դուս կաբանիցա, հեյ գիտի վանչո, տաս կապիտանչո, փալանչո…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հիմա միասին… երեք, չորս… Ալա – բալանիցա…

*(Հաշվում է, աչքերը փակում):*

ՊԵՏ – Իսկ որ ներս մտավ, ոնց որ խելագար չլիներ… Շատ զգույշ պետք է լինել, շա՛տ…

**/Գրասեղանը մթնում է: Լուսարձակի շողը դեպի կենտրոն է բերում Գիդին/:**

ԳԻԴ – Հարգելի ընկերներ, ես ձեզ ծանոթացրեցի Աշխարհի կենտրոնի անձնագրային բաժնի աշխատողի հետ:

Իսկ հիմա – սո՛ւս. արթնանում է Աշխարհի կենտրոնի բանաստեղծը:

**ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ**

*(Լուսավորվում է ձախ կողմի պատշգամբը: Մի տղա և մի աղջիկ շախմատ են խաղում անկյունում: Մայրն արդուկում է: Թախտի վրա քնած է հայրը):*

ՏՂԱ – Շախ:

ԱՂՋԻԿ – Յա, ի՞նչ շախ, քո շախը բացվում է:

ՄԵԼԻՆԵ – Երեխաներ, քանի անգամ եմ ասելու, սուս, հայրիկը քնած է: Սուս, հայրիկը գիշերը չի քնել:

ՏՂԱ – Որ այդպես է ես հիմա քո թագուհին կտանեմ…

ԱՂՋԻԿ – Չէ, չէ, չեղավ, դու ֆերզ չասացիր:

ՏՂԱ – Ինչո՞ւ պիտի ասեմ:

ԱՂՋԻԿ – Պիտի ասես, պիտի ասես:

ՏՂԱ – Միջազգային խաղերում այդպիսի բան չկա:

ԱՂՋԻԿ – Չէ, մամ, ասա, թող քարս տա…

ՄԱՅՐ – Հիմա քարը կվերցնեմ ու գլխիդ կխփեմ: Չասացի՞ հայրիկը քնած է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

*(Երեխաները լռում են, բայց լուռ սկսում են իրար ձեռքից քաշքշել շախմատի քարը և հանկարծ շախմատը քարերով աղմուկով ընկնում է ներքև):*

ՏՂԱ – Դե առ քարերդ:

ՄԱՅՐ – Օ՜հ, ուրեմն դուք ինձ չե՞ք լսում, ուրեմն իմ խոսքը ձեզ համար նշանակություն չունի՞, Մարիամիկ, տեղդ, անկյուն: Տիգրանիկ, մոտ եկ:

ՏՂԱ – Հանկարծ եղավ, մամ:

ՄԱՅՐ – Տիգրանիկ, քեզ ասում եմ, մոտ եկ:

ՏՂԱ – Լավ էլի, մամ:

ՄԱՅՐ – Տիգրանիկ դու գիտե՞ս, որ ես գամ, ինչ կլինի:

ՏՂԱ – Նույնը, ինչ որ եթե ես գամ:

ՄԱՅՐ – Ահա, ուրեմն գիտես և շարունակում ես չլսե՞լ, ուրեմն ես քեզ ասում եմ, որ հայրիկը քնած է, որ մեր հայրիկը հոգնած է, գիշերը չի քնել, իսկ դու շարունակում ես խոսե՞լ բարձր, ես քեզ հիմա… *(կսմթում է)*:

ՏՂԱ - *(Ճչում է)* Օ՜յ…

ՄԱՅՐ – Սուս, հայրիկը քնած է, ասում եմ:

ՏՂԱ – Օյ, օյ, օյ…

ՄԱՅՐ – Քեզ ասում եմ, սուս:

ՏՂԱ – Ախր, օ՜յ, ցավում է, կսմթում ես, ո՞նց սուս մնամ:

ՀԱՅՐ - *(Պառկած տեղից)* Հը, ի՞նչ եղավ, թյու, էս ինչ տուն է, ի՞նչ եք ձայներդ գլուխներդ գցել:

ՄԱՅՐ – Քեզ չասացի՞ սուս, քեզ չասացի՞ սուս…

ՏՂԱՆ – Վայ, վայ, վայ…

ՄԱՅՐ – Քեզ չասացի՞ հայրիկը քնած է, անպիտան տղա *(Ճչում է):*

ՀԱՅՐ – Քնած չեմ, քնած չեմ, քո ձայնը կթողնի՞, որ մարդ քնի, քո ձայնը…

ՄԱՅՐ – Ի՞նչ, իմ ձա՞յնը: Ես քեզ համար առավոտվանից համրի պես նստած եմ, ու իմ ձա՞յնը, հա՞, ես առավոտվանից երեխաներին ասում եմ՝ սուս հա սուս, ու իմ ձա՞յնը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՅՐ – Բայց դու սուսն այնքան բարձր ես ասում, որ ամեն անգամ վեր եմ թռչում տեղից:

ՄԱՅՐ – Ախ, այդպես… Մարիամիկ, Տիգրանիկ, դուրս:

ՏՂԱ – Ախր դրսում ցուրտ է:

ԱՂՋԻԿ – Դրսում հետաքրքիր չէ, մամ:

ՄԱՅՐ – Ախ, ներսում հետաքրքի՞ր է: Դուրս, ասում եմ:

*(Երեխաները դուրս են գնում):*

ՄԱՅՐ – Հակոբ, այդ խոսքն ասելուց չամաչեցի՞ր:

ՀԱՅՐ – Ուրեմն ե՞ս պիտի ամաչեմ: Ամբողջ գիշեր աշխատել եմ, չեմ քնել, աչքս կպել է թե չէ, անընդհատ ականջիս մեջ գոռում ես՝ սուս հա սուս, սուս հա սուս:

ՄԱՅՐ – Ուրեմն թողնեի իրենք գոռայի՞ն, հա՞: Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, պատասխանը սա պետք է լիներ, բա ի՞նչ: Ուրիշ ի՞նչ պետք է սպասեի: Ձայնս արդեն դուրդ չի գալիս: Ուրիշ նուրբ ու հաճելի ձայն ես լսել, հա՞: Կներես, ժամանակ չեմ ունեցել ձայնս կոնսերվատորիայում մշակելու: Ձայնս իրեն դուր չի գալիս: Տեսեք, տեսեք ինչ օրի հասանք: Գիշեր- ցերեկ ավլի, թափի, եփի, լվա, կերցրու, խմեցրու…

ՀԱՅՐ – Մելինե…

ՄԱՅՐ – Լսել չեմ ուզում: Ասելիքդ ասացիր, էլ ի՞նչ պիտի ասես: Երեխաներին դպրոց տար, մանկապարտեզ տար: Տար բեր, տար բեր, գիրք առ, տետր առ, դաս սովորեցրու, ինչի՞ց ես տեղյակ, մարդ աստծո, ինչի՞ց ես տեղյակ: Հարևանները կզարմանան, ծանոթները կապշեն, թե ինչպես միշտ թմբլիկ, միշտ մաքուր են մեր զավակները… Կլսե՞ս…

ՀԱՅՐ – Մելինե…

ՄԱՅՐ – Դու գիտե՞ս, թե ինչպես եմ հասցնում այդ բոլորը: Եղե՞լ է մի օր, որ ճաշդ պատրաստ չլինի, հը՞: Ամեն ինչը տեղը տեղին, իմ ձայնը չի հավանում, ինձ չի հավանում այլևս:

ՀԱՅՐ – Մելինե…

ՄԱՅՐ – Մելինե, այո, ամբողջ թաղն ինձ մոտ խորհրդի կգա: Մելինե քույրիկ, թթուն ինչպե՞ս դնենք: Այսպես, այսպես կասեմ: Մելինե քույրիկ, նապոլեոնն ինչպե՞ս թխեմ: Այսպես, այսպես՝ կասեմ: Մելինե, սպասը որ չկտրվի, ի՞նչ պետք է անեմ: Ձու պետք է մեջը գցեք, կասեմ: Մելինե, այս կտորն ի՞նչ տեսակ հագուստի կսազի, այս ու այս կասեմ: Ամենքն իմ ձայնը կարող են լսել, միայն սիրելի ամուսինս չի ուզեր: Ուրիշ ձայն է ուզում ամուսինս, քնքուշ ձայն, օպերայի ձայն…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՅՐ – Դե բավական է, իսկ ես ոչինչ չե՞մ անում, չե՞մ աշխատում, ամբողջ գիշերներ չեմ քնում…

ՄԱՅՐ – Է, քնիր, օրինավոր մարդիկ գիշերները կքնեն:

ՀԱՅՐ – Բայց չէ՞ որ ես գրում եմ: Ցերեկն ինձ ո՞վ կթողնի, որ գրեմ…

ՄԱՅՐ – Է, գրածներիցդ ի՞նչ օգուտ, բանաստեղծ ամուսինս:

ՀԱՅՐ – Երբ որ տպեն՝ կլինի:

ՄԱՅՐ – Ուրեմն, երբ որ տպեն՝ նոր կխոսես:

ՀԱՅՐ – Ոչ, որ տպեն, չեմ էլ խոսի: Ափսոս, ափսոս իմ անքուն գիշերները, ափսոս իմ տառապանքը, իսկ ես ամբողջ գիշեր քեզ հետ էի, քեզ էի սիրում, քեզ էի հիշում, քո մասին էի մտածում:

ՄԱՅՐ - *(Մեղմացած)* Ինչ է, ես յոթ սարի ետևո՞ւմ էի, հանգուցյա՞լ էի:

ՀԱՅՐ – Մի խոսիր այդպես, թե չէ իսկապես կափսոսամ գրածս:

ՄԱՅՐ – Իսկ այդ ի՞նչ ես գրել, որ ափսոսաս: Պահ-պահ, գրածներդ այս չէ՞: Տանեմ դե՞ն ածեմ, թե պահեմ արկղիդ մեջ:

*(Վերցնում է թղթերը և հանկարծ կարդում)*

«Իմ Մելինեին»: Սա ի՞նձ ես գրել, ի՞նձ ես գրել: Հակո՞բ:

ՀԱՅՐ - *(Վերցնում է ձեռքից)* Թող, ոչ մի կարիք չկա:

ՄԱՅՐ – Այսինքն, ինչպե՞ս թե կարիք չկա, ինձ ես գրել՝ կարդա: Չիմանա՞մ ինչ ես գրել ինձ… Հակոբ…

ՀԱՅՐ - *(Դողդոջ ձայնով, հետո բարձր)*

*Երգում է հոգիս, դարձել եմ գինով,*
*Ուզում եմ այսօր ես անչար լինել,*
*Ասել, որ միշտ դու ջահել ես, գերող,*
*Իմ բարի արև, անուշ Մելինե…*

ՄԱՅՐ – Վա՛յ, իսկապես իմ մասին է…

ՀԱՅՐ –

*Հասակ են առնում զավակները մեր*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

*Կա՞ ուրիշ մի խինդ ծնողի համար:*
*Եվ այդ ամենը քո մեծ, անձնվեր*
*Սրտի զարկից է, կրակից անմար…*

ՄԱՅՐ – Ինչ ճիշտ է, ճիշտ է, Հակոբս… քեզ հետ, քեզ հետ…

ՀԱՅՐ –

*Թույլ տուր, որ այսօր կրծքիս սեղմեմ քեզ*
*Համբուրեմ հոգնած մատներդ սիրով,*
*Ու քնքուշ խոսքեր շշնջամ որպես*
*Երդում սրբության կյանքի ու սիրո:*

ՄԱՅՐ – Ամա՛ն, խենթացա՞ր, երեխաները չլսեն…

ՀԱՅՐ –

*Ի՜նչ երջանկություն, կյանքի ճամփեքին*
*Քեզ հետ միասին, քո կողքին լինել,*
*Ապրել քեզանով, սիրել ջերմագին*
*Իմ հավատարիմ, իմ լավ Մելինե…*

ՄԱՅՐ - *(Լռությունից հետո)* Եվ այս բոլորը գիշե՞րն ես գրել:

ՀԱՅՐ - *( Գլխով է անում դեռևս խռոված):*

ՄԱՅՐ – Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ…

ՀԱՅՐ – Ուզեցի այսօր մի նվեր տամ քեզ…

ՄԱՅՐ – Սա ամենամեծ նվերն էր, որ ես երբևէ ստացել եմ կյանքումս: Որքա՜ն անարդար էի ես, Հակոբ, որքա՜ն անարդար… Պառկիր, հա՞, հոգնած ես, քնիր, քնիր…

ՀԱՅՐ – Չէ, ոչինչ, ոչինչ, Մելինե:

ՄԱՅՐ – Բա ես ի՞նչ անեմ, ես ասում էի՝ սո՜ւս *(կամացուկ),* սուս: Ես ասում էի սուս, հայրիկը քնած է… Իսկ այդ անպիտանները…

ՀԱՅՐ – Մենք լավ զավակներ ունենք, Մելինե…

ՄԱՅՐ – Ուրիշ կերպ չէին կարող լինել քո զավակները: Բայց ախր ես անընդհատ ասում էի՝ սո՜ւս, սո՜ւս: Ի՞նչ անեմ, երկու սենյակ է, տասը սենյակ որ լիներ, դու հանգիստ կքնեիր, Հակոբս:

ՀԱՅՐ – Քո ձայնը տասներորդ սենյակից էլ կլսվեր, սիրելիս…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱՅՐ – Հակո՛բ…

ՀԱՅՐ – Մելինե՛…

/Հայտնվում է գիդը/:

ԳԻԴ – Եվ այսպես կամ գրեթե այսպես ամեն օր: Մեր սիրելի բանաստեղծին մխիթարում է միայն այն, որ բոլոր մեծ բանաստեղծներն էլ հետմահու են արժանի ճանաչում գտնում: Եվ նա անհամբերությամբ սպասում է այդ օրվան, կյանքի մանր ու մեծ հարվածներն ընդունելով փիլիսոփայորեն…

Փի-լի-սո-փա-յո-րեն…

Եվ, այնուամենայնիվ, էքսկուրսիան շարունակվում է… Բայց ես տեսնում եմ, որ ձեզանից բացի ուրիշ այցելուներ էլ ունի Աշխարհի կենտրոնը: Ո՞ւմ են որոնում արդյոք… Դե, իհարկե, մեր քննիչին:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

ՏԱՐԵՑ ՄԱՐԴ – Ազատ ջան, ասում ես լավ ես ճանաչում, հա՞:

ԱԶԱՏ – Ասացի այո, քեռի, ինչո՞ւ չես հավատում:

ՏԱՐԵՑ – Հավատում եմ, հավատում: Մի բարկանա, իսկ ինքը քեզ կճանաչի՞:

ԱԶԱՏ – Իհարկե, մանկությանս ընկերն է:

ՏԱՐԵՑ – Է, էնքան մանկության ընկերներ կան, որ հետո չեն ճանաչում:

ԱԶԱՏ – Ասում եմ՝ կճանաչի:

ՏԱՐԵՑ – Դե, ապրես, ապրես, քրոջ որդի, էս մի նեղությունից էլ որ ազատվեմ, էլ ինձ մահ չկա:

ԱԶԱՏ – Դատարկ բան է, քեռի: Քանի անգամ ասեմ, խոսել էլ չարժե, հարցն ինքնըստինքյան պարզ է և արդարացիորեն կլուծվի:

ՏԱՐԵՑ – Առանց խոսելո՞ւ:

ԱԶԱՏ – Իհարկե:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԱՐԵՑ – Լսիր, քրոջ որդի, դու քո ասածին հավատո՞ւմ ես: Հիմա առանց խոսելու հարց կլուծվի՞:

ԱԶԱՏ – Ուրեմն բոլոր հարցերը քո այդ… խոսելո՞վ են լուծվում:

ՏԱՐԵՑ – Իհարկե:

ԱԶԱՏ – Է…

ՏԱՐԵՑ – Դե լավ, լավ, մի նեղանա, մտիր, Ազատ ջան, բայց հենց սկզբից հասկացրու, որ հոգու խաթեր չի անելու: Ասա, մենք էլ մարդ ենք, էլի, կամ ասա՝ ժամը քանիսի՞ն գամ ու հետն էլ աչքով արա: Որ թիվն ասաց, այդքան էլ բերենք, որ պրծնենք:

ԱԶԱՏ – Ինչի՞ց պրծնես…

ՏԱՐԵՑ – Դե, էս պատմությունից, էլի…

ԱԶԱՏ – Ես կխելագարվեմ: Լսիր, այ քեռի, ախր ի՞նչ է պատահել: Ինչ որ պատմեցիր, դա չէ՞:

ՏԱՐԵՑ – Դա է, բա ի՞նչ է:

ԱԶԱՏ – Հո ուրիշ բան չի՞ եղել:

ՏԱՐԵՑ – Էլ դրանից ավելի ի՞նչ պիտի լիներ…

ԱԶԱՏ – Ուրեմն՝ հարևանի տղաները կռվել են, մեկը դանակով փորձել է խփել մյուսին, դու բռնել ես նրան, դանակը խլել ես ձեռքից ու մի ապտակ ես հասցրել, չէ՞…

ՏԱՐԵՑ – Ձեռքս չորանար, չխփեի…

ԱԶԱՏ – Շատ էլ լավ ես արել, որ խփել ես…

ՏԱՐԵՑ – Էդ դու ես ասում, մի տես քննիչն ինչ կասի…

ԱԶԱՏ – Ի՞նչ պիտի ասի…

ՏԱՐԵՑ - *(Տնքում է)*: Կասի խուլիգանություն ես արել ու այսինչ-այնինչ հոդվածով պիտի նստես… Բա որ ես նստեմ, քեռակինդ ի՞նչ անի… պառկի՞…

ԱԶԱՏ – Ախր ինչո՞ւ պիտի նստես…

ՏԱՐԵՑ – Բա ուրիշներն ինչո՞ւ են նստում…

ԱԶԱՏ – Տե՛ր աստված…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԱՐԵՑ – Բա, տեսնո՞ւմ ես, որ աստված ես կանչում…

ԱԶԱՏ – Բա ի՞նչ անեմ, ախր դու վկա ես, վկա, հասկանո՞մ ես…

ՏԱՐԵՑ – Բոլորին էլ սկզբից որպես վկա են կանչում, հետո նստեցնում են, ես չգիտե՞մ… մինչև որ չխոսես…

ԱԶԱՏ – Էհ, դե լավ, ես գնացի… *(Վճռական քայլերով մոտենում է դռանը)*:

ՏԱՐԵՑ – Չմոռանաս, աչքով կանես, արևիդ մեռնեմ… Կամ ասա՝ «Մենք էլ մարդ ենք», չմոռանաս…

*(Ազատը ներս է մտնում: Քեռին անհանգիստ քայլում է բակում: Գրպանից դրամ է հանում, ուզում է հաշվել, հետո վախեցած գրպանն է դնում):*

ԱԶԱՏ - *(Դուրս գալով, ժպտալով):* Հը, տեսա՞ր: Դե հիմա հանգիստ տուն գնա:

ՏԱՐԵՑ – Ուրեմն…

ԱԶԱՏ – Ամեն ինչ լավ է, քեռի… Ասում էի, չէ՞…

ՏԱՐԵՑ – Վայ, քեռին քո արևին մեռնի… Շատ-շատ շնորհակալ եմ, Ազատ ջան… բա ես կարգը չգիտե՞մ… Ինչքա՞ն ուզեց…

ԱԶԱՏ – Ի՞նչը ինչքան…

ՏԱՐԵՑ – Ասում եմ ինչքա՞ն փող ուզեց…

ԱԶԱՏ – Ի՛նչ փող, այ մարդ, ասաց՝ դեպքին լավ ծանոթ է, քեռիդ շատ ճիշտ է վարվել, թող հանգիստ, ազատ գնա իր գործին:

ՏԱՐԵՑ – Բա փող չուզե՞ց…

ԱԶԱՏ – Չէ, այ մարդ, ի՞նչ փող…

ՏԱՐԵՑ – Տունս քանդվեց… *(Բռնում է գլուխը):*

**/ Հայտնվում է գիդը/**

ԳԻԴ – Հարգելի ընկերներ, չզարմանաք, որ այսպիսի քննիչներ էլ կան: Կան: Պատահում են: Բայց ահա և ինքը՝ Աշխարհի կենտրոնի քննիչը: Նա մռայլ է, ուրեմն վայ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հանցագործներին: Նրանք դատապարտված են… Ես մարդկայնորեն խղճում եմ նրանց:

Առանց այն էլ շատ քիչ են մնացել և մի կարգին մակարդակ չունեն: Շատ են խեղճանում հատկապես զենքի հարցում: Այնտեղ, կապիտալիստական երկրներում գրախանութներում անգամ զենքեր են վաճառում, գնիր ինչ ուզում ես, թեկուզ թնդանոթ: Իսկ մեր խանութներում կարգին դանակ-պատառաքաղ էլ չես գտնի…

Չէ, ինչ ուզում եք ասեք, մեզ մոտ նորմալ պայմաններ չկան հանցագործության համար, հարգելի ընկերներ:

*( Քննիչը մոտենում է գրասեղանին: Փակցնում է «Քննիչ» տախտակը, ստուգում է հեռախոսը, ատրճանակը հանում, դնում է սեղանի դարակում և բացականչում):*

ՔՆՆԻՉ – Ներս թողեք կասկածյալին:

*(Ներս է գալիս գողը)*

ՔՆՆԻՉ – Լսեք Վաղինակ, նույնը Վաղո, նույնը Զուբ, նույնը Դարդոտ, նույնը Աղվես, նույնը… և այլն: Խոստովանո՞ւմ եք, որ սույն թվի հունիսի 6-ին, ցերեկվա ժամը 12-ի մոտերքում մտել եք քաղաքացի Սեդրակ Սահակյանի բնակարանը և կատարել գողություն:

ԳՈՂ – Քաղաքացի քննիչ, բա էս լեն ու բոլ աշխարհում մարդ գողություն կանի՞:

ՔՆՆԻՉ – Դուք ինձ հարցեր մի տվեք, պատասխանեք՝ արե՞լ եք, թե ոչ:

ԳՈՂ – Քաղաքացի քննիչ, որ ասեմ արել եմ, կհավատա՞ս:

ՔՆՆԻՉ – Ուրեմն չե՞ք արել:

ԳՈՂ – Քաղաքացի քննիչ, ախր ինչի՞ պիտի անեմ: Դու կանեի՞ր:

ՔՆՆԻՉ - *(Բարկանալով):* Դե, դե, ձեզ հիմարի տեղ մի դրեք: Մենք ձեր կենսագրությունն անգիր գիտենք:

ԳՈՂ – Որտեղի՞ց գիտես, ոչ մի գրքում գրված չի, իմ կենսագրությունը համեստ կենսագրություն է:

ՔՆՆԻՉ – Շա՛տ համեստ է: Երկու անգամ բռնվե՞լ եք գողության մեջ:

ԳՈՂ – Բռնվել եմ:

ՔՆՆԻՉ – Ներե՞լ են, ժամկետից շուտ բա՞ց են թողել:

ԳՈՂ – Բաց են թողել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՔՆՆԻՉ – Բա չե՞ք ամաչում, որ երրորդ անգամ…

ԳՈՂ – Քաղաքացի քննիչ, օրինակ, լավությունն ինչո՞ւ ես երեսովս տալիս: Կներես, բայց սարքեցիր տժվժիկը:

ՔՆՆԻՉ – Ա՛խ, տժվժի՞կը, տժվժիկը դուք դեռ հետո կտեսնեք: Ձեր համառությունն ավելորդ է, զուր ջանք: Իմացեք, որ վերոհիշյալ տան դռան բռնակի, գրասեղանի ապակու և չինական տուփի վրա հայտնաբերված են մատների հետքեր, որոնք ըստ դակտիլոսկոպիկ հետազոտության տվյալների համապատասխանում են ձեր մատների հետքերին:

ԳՈՂ - *(Բարկացած)* Սուտ է, հայ, հայ, մատների հետքեր: Մատների հետքեր որտեղի՞ց գտաք, երբ որ ես ձեռնոցներով եմ աշխատել: Սուտ է:

ՔՆՆԻՉ - *(Հաղթական)* Ահա, բռնվեցիք, աղավնյակս:

ԳՈՂ - *(Շփոթված)* Ես… բայց… ախր… սակայն… քաղաքացի քննիչ…

ՔՆՆԻՉ – Որտե՞ղ եք թաքցրել գողացած ապրանքը, ասացեք արագ, մենք տեղը գիտենք, բայց լավ կլինի, որ դուք ասեք: Դա կմեղմացնի ձեր պատիժը: Շուտ, շուտ…

ԳՈՂ – Լավ, ինչ եղավ, եղավ: Խոստովանում եմ: Ներքնահարկում, հատակի երրորդ և չորրորդ տախտակների տակ:

ՔՆՆԻՉ - *(Վերցնում է լսափողը)* Սրապ, անմիջապես մեղադրյալի հետ մեկնեք նրա տուն, ներքնահարկի տախտակների տակ իրեր կան: Տեղազննություն կատարեք, կազմեք համապատասխան արձանագրություն և իրերը վերցրեք բերեք:

ԳՈՂ – Քաղաքացի քննիչ, ասեք երրորդ և չորրորդ տախտակների տակ, մյուս տախտակներին թող ձեռք չտան, էնտեղ ուրիշ ապրանքներ են: Չխառնվեն:

ՔՆՆԻՉ – Գնացեք, գնացեք:

ԳՈՂ – Ո՞նց թե գնացեք, բա որ տերերը մի օր գան ուզե՞ն… Դու ըլնես, ի՞նչ կանես… *(Դուրս է գնում)*:

ՔՆՆԻՉ - *(Վերցնում է լսափողը, զանգում է)* Ընկեր Սեդրակ Սահակյանի բնակարա՞ննն է: Բարև ձեզ, ընկեր Սեդրակ Սահակյան: Քննիչն է: Այո, այո, կարող եք ինձ շնորհավորել, ինչպես նաև ձեզ: Գողը բռնված է: Բավականին չարչարեց ինձ, բայց դե ես միայն այդպիսի թռչունների չեմ տեսել: Ի վերջո, խաչաձև քննությանը չդիմացավ, ամեն ինչ խոստովանեց: Ի՞նչ, դուք ձեր կորցրածն արդեն գտե՞լ եք: Ինչպես թե, ե՛ս եմ գտել: Հիմա կբերեն: Ոչինչ չեմ հասկանում: Եկեք, եկեք այստեղ, պարզենք:

*( Ապշած ետ ու առաջ է քայլում սենյակում, ուսերը բարձրացնելով և օրորելով գլուխը):*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այ քեզ բան: Այս գողը գո՞ղ է, թե ապուշ է: Բայց գուցե այդ տանտերն է ապուշ: Առաջին անգամ է ինձ նման դեպք հանդիպում: Այսպես, եկեք սառը վերլուծենք. կատարվել է գողություն, գողը բռնված է: Գողը խոստովանում է: Գողացված ապրանքները կան: Կողոպտված տանտերը հայտնում է, որ ինքը կողոպտված չէ: Ուրեմն ի՞նչ: Ուրեմն էլ ի՞նչ գող, էլ ի՞նչ գողացված ապրանք: Խելագարվել կարելի է: Սպասեք, սպասեք, եկեք մանրամասն վերլուծենք, ուրեմն այսպես, կատարվել է գողություն, գողը բռնված է…

*( Ներս է մտնում գողը՝ մի մեծ ճամպրուկով):*

ԳՈՂԸ – Բերեցի, քաղաքացի քննիչ, բացե՞մ: Հա, բայց արձանագրի, որ ես բերեցի:

ՔՆՆԻՉ – *(Հեգնանքով)* Իսկ ձե՞զ ով բերեց:

ԳՈՂ – Քաղաքացի միլիցիոներ Սրապը:

ՔՆՆԻՉ – Դա՞ էլ արձանագրենք: *(Նայում է բաց ճամպրուկի ներսը):*

Վահ, բայց սա հո իսկական հարստություն է:

ԳՈՂ - *(Ամաչելով)* Ես մանր-մունր գործեր չեմ սիրում: Լավ բաներ են, չէ՞:

ՔՆՆԻՉ - *(Ձեռքին պտտեցնելով փայլփլուն մատանիները, ժամացույցները, ապարանջանները):* Պահ, պահ, պահ, ինչ նուրբ աշխատանք, ինչպիսի երանգներ…

ԳՈՂ – Դե տեսնում ես, որ դու իմ տեղը լինեիր, չէի՞ր անի:

ՔՆՆԻՉ - *(Նեղացած)* Վերջ տուր, ես ոչ մի դեպքում չեմ կարող այդպիսի բան անել, հասկացա՞ր, հիմար:

ԳՈՂ - *(Վիրավորված)* Չես կարող՝ չես կարող, ինչի՞ ես վիրավորում: Ով ինչ կարող է, էն էլ պետք է անի:

ՔՆՆԻՉ – Մանրամասն պատմեք, թե ինչպես է եղել դեպքը: Որտեղի՞ց իմացաք, որ քաղաքացի Սեդրակ Սահակյանի տանը այսպիսի թանկարժեք իրեր կան:

ԳՈՂ – Սեդրակ Սահակյանը պահեստապետ է:

ՔՆՆԻՉ – Հետո՞ ինչ: Բայց դուք տունն եք մտել, ոչ թե պահեստը:

ԳՈՂ – Սակայն ի՞նչ տարբերություն: Պահեստի դուռը դալաթ է արել նրա տան դռան մոտ:

ՔՆՆԻՉ – Ինչո՞ւ, ի՞նչ դուռ էր:

ԳՈՂ – Ձեր հարցին պատասխանում եմ, որ կրկնակի երկաթյա դռներ են, մի հատ էլ կաղնե փայտե: Բոլորը միասին վերցրած տասնութ կողպեք կա դրանց վրա, երկու շղթա և

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

երեք հաստ երկաթ, որ պտտվելով ետ ու առաջ են գնում: Կողպեքներից հինգն անգլիական տիպի են, յոթը՝ հայրենական, չորսը՝ գյուղական «ղֆիլ», մեկը՝ ֆրանսիական… Դե հիմա դու ասա, քաղաքացի քննիչ, եթե դու շատ հարուստ չես և հարստությունդ էլ գողացած չէ, ինչո՞ւ պիտի դուռը դարձնես կողպեքների ցուցահանդես:

ՔՆՆԻՉ – Ուրեմն քաղաքացի Սեդրակ Սահակյանը գո՞ղ է:

ԳՈՂ – Պահեստապետ է: Ախր չեն հասկանում, է՛, քաղաքացի քննիչ, մենք էլ մարդ ենք, չէ՞, այդպիսի դուռ որ տեսնես, ո՞նց չմտնես: Ձեռքերս դողում էին:

ՔՆՆԻՉ – Բայց դուք թվեցիք ընդամենը տասնյոթ կողպեք, իսկ տասնութերորդը՞…

ԳՈՂ - Տասնութերորդն էն կողպեքներից է, որ վրան օտար լեզվով տառեր են գրված:

ՔՆՆԻՉ – Եվ ի՞նչ բառով էր բացվում:

ԳՈՂ - *(Ամաչելով)* Չգիտեմ: Ախր ես օտար լեզու չեմ անցել: Չորրորդ դասարանի կրթություն ունեմ:

ՔՆՆԻՉ – Բա ինչպե՞ս բացեցիք:

ԳՈՂ – Չբացեցի, քաղաքացի քննիչ:

ՔՆՆԻՉ – Բա ինչպե՞ս ներս մտաք:

ԳՈՂ – Պատուհանից, քաղաքացի քննիչ:

ՔՆՆԻՉ – Այ մարդ, *(ջղայնությունից չգիտե թե ինչ անել)* բա որ պատուհանից ես մտել, ի՞նչ ես կես ժամ գլուխս տանում դուռը նկարագրելով:

ԳՈՂ - *(Համեստորեն)* Քաղաքացի քննիչ, ախր դու խնդրեցիր, որ պատմեմ: Հիշո՞ւմ ես, ասացիր, ինչո՞ւ, ի՞նչ դուռ էր…

ՔՆՆԻՉ – Լավ, լավ, թյու…

*( Ներս է մտնում տանտեր Սեդրակ Սահակյանը):*

ՍԵԴՐԱԿ - *(Կարծելով, թե քննիչը փոշտացել է):* Առողջություն… Բարև ձեզ *(սեղմում է քննիչի ձեռքը):* Սեդրակ Սահակյան: Բարև ձեզ *(սեղմում է գողի ձեռքը):* Սեդրակ Սահակյան:

ՔՆՆԻՉ – Նստեք, ընկեր Սահակյան: Ահա գողը:

ՍԵԴՐԱԿ – Շատ ուրախ եմ. մենք արդեն ծանոթացանք: Այսինքն, նորից ծանոթանանք: Սեդրակ Սահակյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՔՆՆԻՉ – Ահա և ձեր իրերը, ընկեր Սահակյան: Պատկերացնում եմ, թե որքան եք վշտացել՝ երբ իմացել եք, որ սրանք գողացված են:

ՍԵԴՐԱԿ – Ի՞նչ իրեր: Սրա՞նք: *(Նայում է, ուզում է ձեռքը մեկնել, զսպում է, բայց օրորվում է հուսահատությունից)* Սը-սրանք ի՞նչ իրեր են:

ՔՆՆԻՉ – Հրաշալի իրեր են: *(Ուրախ)* Ձեր ապրանքներն են, ընկեր Սահակյան, և նորից կվերադառնան իրենց օրինական տիրոջ մոտ: Գողն ամեն ինչ խոստովանեց:

ԳՈՂ – Դու լինեիր, չէի՞ր խոստովանի:

ՍԵԴՐԱԿ – Սը-սպասեցեք, բը-բայց սա թյուրիմացություն է *(աչքը չհեռացնելով զարդերից)*: Սը-սրանք իմ ապրանքները չեն:

ՔՆՆԻՉ – Ինչպե՞ս թե: Սեդրակ Սահակյանը դուք չե՞ք:

ՍԵԴՐԱԿ – Ես եմ:

ՔՆՆԻՉ – Ըհը, տեսնո՞ւմ եք, այ, ճամպրուկի վրա գրված է՝ Ս.Ս., Սեդրակ Սահակյան:

ՍԵԴՐԱԿ - Իսկ ինչո՞ւ Սեդրակ Սահակյան *(բարկանալով)*: Ինչո՞ւ անպատճառ Սեդրակ Սահակյան և ոչ թե, ասենք, Սերոբ Սարգսյան, Սիմոն Սիմոնյան, Սուրեն Գրիգորյան, Վարդան Բաբայան: Պատերազմի ժամանակ գերմանական մի ամբողջ դիվիզիա ՍՍ անունն ուներ:

ՔՆՆԻՉ – Սպասեցեք, լավ, ուրեմն սրանք ձեր իրերը չե՞ն:

ՍԵԴՐԱԿ – Ասացի ոչ:

ԳՈՂ – Վայ, ուրեմն ես խաբո՞ւմ եմ: Ուրեմն ես քո տնից չե՞մ տարել:

ՍԵԴՐԱԿ – Ոչ:

ԳՈՂ – Ո՞նց թե, կողպեքներով տունը քո տունը չի՞, պատուհանից որ ներս են մտնում խոհանոց…

ՍԵԴՐԱԿ – Ես երբեք պատուհանից չեմ մտնում…

ԳՈՂ – Լավ, լավ, ես մտնում եմ: Հետո միջանցքով որ գնում ես, աջ կողմը ճաշասենյակն է, չէ՞, իսկ ձախում՝ ննջարանը: Այդ ննջարանից էլ մի մուտք չկա՞ դեպի մյուս ննջարան: Հը՞: Իսկ էնտեղ ֆիննական պահարանի մեջ, սպիտակեղենի տակ մի ուրիշ փոքրիկ դարակ չկա՞, որտեղ էլ հենց դրված էր այս ոսկեղենը և յոթ հազար ռուբլի նոր գումարով: Ասում է՝ չես տարել: Մեռա մինչև գտա, իսկ սա ասում է չես տարել:

ՔՆՆԻՉ – Ի՞նչ կպատասխանեք, ընկեր Սահակյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՍԵԴՐԱԿ – Այս քաղաքացին կամ գիժ է, կամ խաբեբա:

ԳՈՂ – Ե՞ս, խաբեբա՞: Գիտե՞ս ինչ, քեզ կարգին պահի, քննիչի սենյակում ես, թե չէ…

ՔՆՆԻՉ – Հանգստացիր, հանգստացիր, Վաղինակ, նույնը Վաղո, նույնը…

ԳՈՂ – Ախր ո՞նց հանգստանամ, քաղաքացի քննիչ, սա ասում է, որ չեմ գողացել:

ՍԵԴՐԱԿ – Այ մարդ, դու հո շառ չե՞ս: Ի՞նչ ես ուզում ինձանից:

ԳՈՂ – Ասում է՝ խաբեբա է: Էս աղամանդե մատանիները քոնը չե՞ն: Էս ոսկե ապարանջանները քոնը չե՞ն, էս ոսկե ժամացույցները քոնը չե՞ն… Ախր իմ ձեռքով եմ մեկ-մեկ վերցրել:

ՔՆՆԻՉ – Ի՞նչ կպատասխանեք, ընկեր Սահակյան:

ՍԵԴՐԱԿ - *(Ամեն անգամ ցնցվելով նոր իրերի հետ):* Իմը չ-չեն, իմը չ-չեն:

ՔՆՆԻՉ – Ուրեմն հրաժարվո՞ւմ եք այս ողջ հարստությունից:

ՍԵԴՐԱԿ – Իմը չեն, իմը չեն:

ՔՆՆԻՉ – Ապշելու բան է: Այս ի՞նչ է ստացվում: *(Տանտերին)* Դուք ինձ համբերությունից մի հանեք, թե չէ կկալանավորեմ ձեզ:

ՍԵԴՐԱԿ – Բայց ինչի՞ համար:

ՔՆՆԻՉ - *(Մեկուսի)* Իսկապես, ինչի՞ համար: *(Բարձր)* Չխոստովանելու համար:

ԳՈՂ – Այ ախպեր, խոստովանի պրծի, տեսա՞ր, ես ոնց խոստովանեցի: Դե դավայ, դավայ…

ՍԵԴՐԱԿ - *(Բարձրանում է տեղից, առաջ է գալիս, հուսահատված)* Լավ, ես ի՞նչ անեմ, հը՞: Այ քեզ փորձանք: Եթե խոստովանեմ, ասեմ իմ ապրանքն է, կորած եմ, կսկսեն հարցնել, թե որտեղի՞ց քեզ այդ ոսկեղենը, այդ փողերը: Չխոստովանեմ… սպանում են: Ի՞նչ անեմ:

ՔՆՆԻՉ - *( Ձեռքին բռնել, դիտում է աղամանդե մի մատանի)* Միայն սա կարժենա մոտ երկու հազար ռուբլի:

ՍԵԴՐԱԿ - *(Վճռական)* Լավ, արի ազնվորեն խոսենք, ընկեր քննիչ, ես եմ ուզում քեզ մի հարց տալ: Դե, ասա, ո՞նց կարող էի ես այդպիսի գանձեր ունենալ, որտեղի՞ց:

ՔՆՆԻՉ - *(Զարմացած)* Ես ի՞նչ իմանամ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՍԵԴՐԱԿ – Յա, դե պատասխանիր, է՛, հարցնելը հեշտ է, որտեղի՞ց, հը՞: *(Զարախնդորեն)* Գիտե՞ս իմ աշխատավարձն ինչքան է:

ՔՆՆԻՉ – Ինչքա՞ն:

ՍԵԴՐԱԿ – Վաթսունմեկ ռուբլի: Իսկ դու ասում ես մատանին երկու հազար ռուբլի արժի, ուրեմն իմ երեք տարվա աշխատավա՞րձը: Իսկ էն մյուս մատանինե՞րը, օղե՞րը, ոսկեղե՞նը, իսկ յոթ հազար ռուբլի՞ն, հը՞: Ուրեմն ես երկու հարյուր տարի աշխատում եմ ու հաց չե՞մ ուտում, հարկ չե՞մ տալիս, շոր չե՞մ հագնում:

ՔՆՆԻՉ – Վաթսունմեկ ռուբլի՞: Իսկ ի՞նչ միջոցներով էիք ծովափ գնացել:

ՍԵԴՐԱԿ - *(Հաղթական)* Տեսա՞ր: Կասկածում ես, որ իմ աշխատավարձով կարող եմ ծովափ գնալ: Բա ուրեմն այս հարստությունը ես որտեղի՞ց ունենայի:

ՔՆՆԻՉ - *(Շփոթված)* Լսեք, Վաղարշակ, նույնը Վաղո, նույնը… Դուք հո տունը չե՞ք շփոթում, գուցե ուրիշ տնի՞ց եք գողացել:

ՍԵԴՐԱԿ – Իհարկե, շփոթել է: Կամ գուցե պարզապես զրպարտում է, տասը բարեկամ ունեմ, երեք թշնամի: Գուցե նա իսկի գող էլ չի, ընկեր քննիչ, դու ասա, բա նա գողի նմա՞ն է:

ԳՈՂ – Ի՞նչ, գող չե՞մ: Չե՞ս ամաչում, այ մարդ, քեզ մնա, կասես էդ ոսկեղենն իմն է:

ՍԵԴՐԱԿ – Քոնն է, բա ինչ է, հենց քոնն է:

ԳՈՂ – Այ մարդ, հիմի սիրտս կճաքի: Տո ես ի՞նչ շահ ունեմ խաբելու, քո տնից եմ գողացել, ասում եմ քո տնից եմ գողացել:

ՍԵԴՐԱԿ – Հայ, հայ, միամիտ մի ձևանա, ի՛նչ շահ ունեմ: Ի՞նչ իմանամ, գուցե հենց Պողոսն է սովորեցրել, որ ինձ բռնեն, ինքն իմ տեղը պահեստապետ դառնա: Ճիշտ չի՞, ընկեր քննիչ:

ԳՈՂ – Պողոսն ո՞վ է: Սա ինձ կսպանի: Ես ազնվորեն չխոստովանեցի՞, տեղը ցույց չտվեցի՞, չբերեցի՞, քաղաքացի քննիչ:

ՔՆՆԻՉ – Լռեք: Ձեր մեջ գժվել կարելի է, սրիկաներ: *(Առաջ գալով)*: Ի՞նչ անեմ ես, ի՞նչ անեմ ես… Էս ի՞նչ պատուհաս էր:

/ Գիդը/

ԳԻԴ – Այո, հանելուկ է: Ես մեր քննիչին երբեք այսպիսի ալեկոծված վիճակում չէի տեսել: Թույլ տանք, որ նա ուշքի գա: Եվ մենք էլ հանգստանանք: Իմ ընդմիջման ժամն է: Իսկ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ընդմիջման ժամն աշխատանքի ժամ չէ, պետք է այն հարգել, ընկերներ: Բեմի մի անկյունից հայտնվում է ՄԵԿԸ սպորտային համազգեստով

ԳԻԴ – Իսկ հիմա, ինչպես տեսնում եք, հայտնվել է տիկին Մանյայի ամուսինը: Զգեստին մի նայեք, նա մի պատկառելի հիմնարկի պետ է: Ի բարեբախտություն ստորադրյալների, նրա հոբբին ոչ թե աշխատողների հաշվին արտասահմանյան մագնիտոֆոնների հավաքածու կազմելն է և ոչ էլ նույն աշխատողների հաշվին իշխան ձկան կամ քյուֆթայի սիրահար համարվելը: Նա պարզապես առավոտները սիրում է վազել:

Ոմանք ասում են, թե ինֆարկտից է փախչում: Ոմանք էլ թե՝ տիկին Մանյայից, որը միևնույնն է: Սովորաբար նա միայնակ է փախչում, այսինքն՝ վազում: Սակայն երբեմն-երբեմն նրա ետևից փորձում են վազել նաև ուրիշները: Եվ երբևէ չեմ տեսել, որ նույն մարդը երկու անգամ նրա ետևից վազի: Թե ի՞նչն է պատճառը՝ հայտնի չէ: Ահա, մեկն էլ հայտնվեց:

**Երևում է ՄՅՈՒՍԸ**

ՄՅՈՒՍԸ – Բ-բարև ձեզ…

ՄԵԿԸ – Ա, բարև, բարև, վազո՞ւմ ես…

ՄՅՈՒՍԸ – Ա-այո…

ՄԵԿԸ – Երբվանի՞ց:

ՄՅՈՒՍԸ – Ողջ կյանքում վազել եմ:

ՄԵԿԸ – Շա՞տ ես սիրում վազել…

ՄՅՈՒՍԸ – Այո, հատկապես ձեր ետևից…

ՄԵԿԸ – Ինչքա՞ն ես կարողանում վազել…

ՄՅՈՒՍԸ – Ինչքան ուզեք… թեկուզ աշխարհի ծայրը…

ՄԵԿԸ – Այ տղա, կողքիցս գնա, հանկարծ ոտք կզցես ինձ…

ՄՅՈՒՍԸ – Ես ձեզ ո՞տք գցեմ… ավելի լավ է կոտրվի ոտքս…

ՄԵԿԸ – Հետո մի ոտքով ո՞նց ես վազելու…

ՄՅՈՒՍԸ – Կվազեմ, կվազեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԵԿԸ – Կողքիցս վազի, ասում եմ…

ՄՅՈՒՍԸ – Չէ, ինչ եք ասում, ինչպե՞ս կարելի է…

ՄԵԿԸ – Իսկ դրա մեջ ի՞նչ կա:

ՄՅՈՒՍԸ – Չէ, չէ, ես դեռ ինչքան պետք է ձեր ետևից վազեմ, որ իրավունք ստանամ ձեր կողքից վազելու…

ՄԵԿԸ – Բա որ այդպես վազում ես, ինչի՞ կարգին չես աշխատում, այ տղա…

ՄՅՈՒՍԸ - Չէ, չէ, հիմա ամեն ինչ լավ է, շեֆ, մեր նամակի պատասխանը եկավ, լրացուցիչ ֆոնդեր են տվել… Գործուղումս զուր չանցավ… պո-պոկեցինք ինչքան պ-պետք է… բայց թանկ նստեց բավականին…

ՄԵԿԸ – Ո՞ւմ հաշվին…

ՄՅՈՒՍԸ – Ի՞նչը ում, շեֆ…

ՄԵԿԸ – Թանկ նստելը…

ՄՅՈՒՍԸ – Ի-իմ գրպանից տվեցի…

ՄԵԿԸ – Մեծ գրպան ունես…

ՄՅՈՒՍԸ – Չէ, չէ, մի քանի մանր-մունր գրպաններ են… Ե-եթե ձեր տեղակալը չխանգարի, ասում եմ, լավ կլինի… Ա-ասելը լավ էլ չի… բայց միշտ ձեզ բամբասում է… Էն օրն էլ… Էն օրն էլ ասում էր… թե… թե…

ՄԵԿԸ – Ի՞նչ…

ՄՅՈՒՍԸ – Հի-հիմա կասեմ, կը-կհասնեմ կասեմ… Ասում էր, թե իբր… Չեմ հասնում, շեֆ:

ՄԵԿԸ – Վազիր, վազիր…

ՄՅՈՒՍԸ – Օֆ, օֆ, սպասեք… բամբ…չէ… ասեմ… ու… ու… սիրտս…

*(Կանգնում է, հևում ու ընկնում գետնին: Մյուսը մոտենում է, բռնում է զարկերակը, զոհունակությամբ շփում է ձեռքերը):*

ՄԵԿԸ – Էս մի զրպարտչից էլ պրծանք… Ինչ լավ հնարեցինք այս վազելը… Տեսնես վա՞ղն ով կգա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

/ Գիդը/

ԳԻԴ – Օհո, դաժան, բայց հրաշալի միջոց է կեղծավորներից ու զրպարտիչներից ազատվելու համար… Եթե ուրիշ միջոց չկա: Բայց սա՞ ով է, սա՞ ինչու է վազում և այն էլ առանց սպորտային զգեստի և ճամպրուկներով ու կնոջով ծանրաբեռ:

Էհե՛, մեր հին հարևանն է: Նոր շենքում բնակարան էր ստացել: Մեր թաղից սովորաբար գնում են, սա առաջին հայրենադարձությունն է… Նոր տունը դուր չեկա՞վ, ինչ է, հարևան…

ՀԱՐԵՎԱՆ – Թող գետինն անցնի… Մարդ չպետք է փոխի իր հասցեն… Որտեղ ծնվել եմ, այնտեղ էլ կմեռնեմ…

ԳԻԴ – Ամեն… այսինքն, ամա՛ն, ինչ կարող է պատահած լինել նրա նոր բնակարանում:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

*(Սովորական մի սենյակ: Կինը մտազբաղ ու տխուր սեղանն է հարդարում, ուտելիքը դնում սեղանին: Լսվում է, թե լողասենյակում ինչպես է լվացվում ամուսինը և հետն էլ խոսում):*

ԱՄՈՒՍԻՆ – Օ՛ֆ, գարնանային գայլի պես քաղցած եմ: Հիմա կգամ ու կխժռեմ ամեն ինչ: Օ՛ֆ, ինչ սառը ջուր է: Էս ո՞նց է, որ չեն կտրել: Ա՛խ, գլուխս հովացավ:

*(Ներս է մտնում ձեռքերը հաճույքով շփելով, նստում է սեղանի մոտ, նայում է ուտելիքներին, հետո զարմացած՝ կնոջը):*

Այս ի՞նչ հաճելի անակնկալ է: Լսիր, չլինի թե կամ քո ծննդյան օրն է, կամ իմ: Այս մածունը որտեղի՞ց: Լսիր, սա մածո՞ւն է, թե կարագ: Չէ, կարագն այս մյուսն է: *(Հոտ է քաշում):* Ես լրիվ մոռացել էի, որ այսպիսի մածուն էլ է եղել երբևէ: Ինձ միշտ թվում էր, թե մածունն այդ խանութների շշերի մեջ լցված թանն է: Բայց սա՞ ինչ կարագ է…հրա՞շք է, ինչ է, իսկական խնոցու կարագ՝ թանի հետքեր էլ վրան:

ԿԻՆ – Կեր, կեր, Արշակ, հետո ես քեզ հետ լուրջ խոսակցություն ունեմ:

ԱՄՈՒՍԻՆ – Լո՞ւրջ, ինձ հե՞տ:

ԿԻՆ – Այո, Արշակ: Քեզ հետ: Բայց կեր, հետո կխոսենք:

ԱՄՈՒՍԻՆ – Ուրեմն քո կարծիքով այդ նախազգուշացումից հետո ուտե՞լ կլինի: Ասա տեսնեմ ի՞նչ է եղել:

ԿԻՆ – Այդ ե՛ս եմ ուզում իմանալ, թե քեզ հետ ինչ է եղել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆ – Ինձ հե՞տ: Իսկ ի՞նչ պետք է լինի, ամեն ինչ լավ է:

ԿԻՆ – Ես էլ հենց այդ լավից եմ վախենում: Ինչո՞ւ է լավ, ի՞նչ է պատահել:

ԱՄՈՒՍԻՆ – Սպասիր, որ վատ լիներ, ավելի՞ լավ կլիներ: Այսինքն, ի՞նչ ես ուզում ասել:

ԿԻՆ – Երբևէ ես քեզանից պահանջե՞լ եմ ավելին, քան դու կարող ես անել:

ԱՄՈՒՍԻՆ – Գետինը մտնեմ, թե որևէ բան հասկանում եմ:

ԿԻՆ – Հիանալի հասկանում ես, մի ձևացրու: Արդեն քսան տարի է, ինչ մենք ամուսնացել ենք, փառք աստծո, երբեք էլ այնպես չենք ապրել, որ հղփանանք: Երբևէ ես քեզ ասե՞լ եմ, թե Արշակ ջան, այս չունենք, այն չունենք, թե ինձ ծովառնետի մորթուց վերարկու է հարկավոր, թե աթոռների ոտքերը ջարդված են, նոր կահույք առ, թե աղամանդե ականջօղերն ինձ շատ են սազում, թե ինչու ամռան այս շոգին անգամ մեր տանը պոմիդոր չկա…

ԱՄՈՒՍԻՆ – Նվարդ ջան, բայց դու գիտես, որ ես հարյուր քսան ռուբլի աշխատավարձ եմ ստանում:

ԿԻՆ – Գիտեմ, դրա համար էլ չեմ պահանջում: Դրա համար էլ այնպիսի գյուտեր եմ անում՝ մինչև աշխատավարձի օրը պարտք չվերցնելու համար, որ յուրաքանչյուր գյուտարար կնախանձեր ինձ:

ԱՄՈՒՍԻՆ – Սիրելի Նվարդ, մի՞թե ես չեմ հասկանում այդքանը: Չէ՞ որ, ի վերջո, ինքս էլ գյուտարար եմ:

ԿԻՆԸ – Համեստություն մի արա: Ես գիտեմ, որ դու հիանալի գյուտարար ես: Դու մի ամբողջ խոշոր գործարան կարող ես պահել, ես գիտեմ, բայց քո աշխատավարձով տուն պահել չես կարող: Դրա համար էլ ես ամեն կերպ աշխատում եմ օգնել քեզ, լավ տնտեսվար լինել, ոչ մի ավելորդ ծախս թույլ չտալ…

ԱՄՈՒՍԻՆ – Բայց այդ դեպքում ի՞նչ է նշանակում այս մածունը, այս կարագը…

ԿԻՆ – Դու ի՞նձ ես հարցնում:

ԱՄՈՒՍԻՆ – Սպասիր, իսկ ո՞ւմ հարցնեմ, Պուշկինի՞ն հարցնեմ:

ԿԻՆ – Պուշկինին ինչո՞ւ ես հարցնում, Գաբրիել Գասպարիչին հարցրու:

ԱՄՈՒՍԻՆ – Գաբրիել Գասպարիչն ո՞վ է, Նվարդ:

ԿԻՆ – Ես չգիտեմ ով է և չեմ էլ ուզում իմանալ: Ես ուզում եմ, որ մենք ապրենք այնպես, ինչպես ապրել ենք: Մեզ ոչինչ պետք չէ: Ազնիվ ապրելուց ավելի մեծ երջանկություն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չկա: Ես դեռ չեմ հանդիպել մեկին, որն անազնիվ ճանապարհով հարստացած լինի և երջանիկ լինի միաժամանակ: Գուցե դա պատահականություն է, բայց այդպես է…

ԱՄՈՒՍԻՆ – Բայց ո՞ւմ համար է քո այդ զեկուցումը՝ բարոյա-խրատական թեմայով:

ԿԻՆ – Քեզ համար, Արշակ:

ԱՄՈՒՍԻՆ – Ի՞նչ…Դու հո այսօր շուկա չես գնացել: Ախ, հա, մածունը, դե իհարկե, գնացել ես:

ԿԻՆ – Իսկ ի՞նչ կապ ունի իմ խոսքերի հետ շուկան…

ԱՄՈՒՍԻՆ – Որովհետև միշտ ասում ես, թե շուկայում խելագարվել կարելի է…

ԿԻՆ – Այո, կարելի է, բայց հիմա ես շուկայի մասին չեմ խոսում, այլ քո այդ Գաբրիել Գասպարիչի մասին: Ո՞վ է այդ Գաբրիել Գասպարիչը: Որտեղի՞ց հայտնվեց, այդ ի՞նչ մոտիկ մարդ է, որի անունը ես առաջին անգամ եմ լսում: Այդ մոտիկ մարդն ինչո՞ւ է քեզ մածուն ու կարագ ուղարկում և ներողություն խնդրում, որ դեռ մեղրը չեն քաշել, որ իբր այս տարի ծաղիկը սակավ է…

ԱՄՈՒՍԻՆ - *(Զարմացած բարձրանում է տեղից):* Սպասիր, սպասիր, բայց նախ և առաջ ո՞վ է այդ Գաբրիել Գասպարիչը:

ԿԻՆ – Եվ դու ի՞նձ ես հարցնում: Նա, ով ուղարկել է այս մածունն ու կարագը, որոնցով դու մանկությունդ հիշեցիր…

ԱՄՈՒՍԻՆ – Ի՞նչ… ո՞ւմ են ուղարկել…

ԿԻՆ – Այ քեզ բան: Ուրեմն դու չգիտե՞ս, թե ով է Գաբրիել Գասպարիչը:

ԱՄՈՒՍԻՆ – Նվարդ ջան, երդվում եմ բոլոր սրբություններով, որ առաջին անգամ եմ լսում: Իմ ծանոթների մեջ մի քանի Գաբրիելներ կան և մի քանի Գասպարիչներ, բայց ոչ մի զտարյուն Գաբրիել Գասպարիչ չկա: Եվ ինքդ էլ գիտես, որ աշխատանքի բերումով նաև չկա ոչ մեկը, որն ինձ գյուղատնտեսական մթերքներ ուղարկի… ես հո…

ԿԻՆ – Ուրեմն ի՞նչ է նշանակում այս մածունը ու կարագը… Մի՞թե սխալվել են: Մարդն ուղղակի հարցրեց…

*(Դուռը զանգում են: Մոտենում բացում է: Ներս է մտնում մեկը՝ մի ծանր բիդոն քարշ տալով):*

ՄԵԿԸ – Բարև ձեզ… Ընկեր Գևորգյանի բնակարանն է, չէ՞:

ԿԻՆ - *(Ամուսնուն է նայում):* Այ, հենց այսպես… այո:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԵԿԸ – Այ, շատ ուրախ եմ, է… ուրեմն էս մի պուճուր յուղը մեր ընկեր Սուքիասյանն է ուղարկել: Անուշ արեք…

ԿԻՆ - *(Ամուսնուն է նայում):* Դու ինքդ էլ պատասխանիր, Արշակ:

ԱՄՈՒՍԻՆ – Սա, սա ի՞նչ յուղ է…

ՄԵԿԸ – Միանգամայն արդար յուղ է, ընկեր ջան… Ուզում եք համը տեսեք, քյահրբարի պես յուղ է… Արդար… Սուքիասյանը…

ԱՄՈՒՍԻՆ – Ներեցեք, իսկ ո՞վ է այդ Արդար Սուքիասյանը…

ՄԵԿԸ – Ընկեր Սուքիասյանը մեր մթերման գրասենյակի պետն է…

ԱՄՈՒՍԻՆ – Բայց ես այդպիսի մարդու չեմ ճանաչում…

ՄԵԿԸ – Չեք ճանաչում, կճանաչեք, ոսկի մարդ է… Ինքն էլ խնդրեց ասեմ, որ սրանից պրոբ անեք, գոնե մի շաբաթ յոլա գնաք, մինչև նոր բիդոն ուղարկի…

ԱՄՈՒՍԻՆ – Նվարդ, դու որևէ բան հասկանո՞ւմ ես: Լսեք, ընկեր, գուցե դուք սխալվել եք: Գուցե ուրիշ տեղ պետք է տանեիք:

ՄԵԿԸ – Ինչո՞ւ, սա Մոլոկովի փողոցի 364 տունը չէ՞:

ԱՄՈՒՍԻՆ – Այո, բայց…

ՄԵԿԸ – Առաջին պադեզդը չէ՞…

ԱՄՈՒՍԻՆ – Այո, բայց…

ՄԵԿԸ – Դուք ընկեր Գևորգյան Ա. Ա.-ն չե՞ք:

ԱՄՈՒՍԻՆ – Ա. Ա.-ն եմ, այսինքն Գևորգյանն եմ, բայց ես ոչ մեկից յուղ չեմ ուզել…

ՄԵԿԸ – Ուրեմն ընկեր Սուքիասյանն էնքան անհասկացող ա, որ սպասեր, ուզեի՞ք… Նա ուրիշ մարդ ա, ուրիշ…

ԱՄՈՒՍԻՆ - *(Զայրացած):* Ես էլ եմ ուրիշ մարդ: Դե անմիջապես վերցրեք այս բիդոնը ու հեռացեք, թե չէ միլիցիա կկանչեմ:

ՄԵԿԸ – Վա՞յ, ինչի՞ եք նեղություն քաշում…

ԿԻՆ – Հեռացեք այստեղից… լսո՞ւմ եք…

ՄԵԿԸ – Լսում եմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿԻՆ – Յուղն ինչո՞ւ եք թողնում…

ՄԵԿԸ - *(Հեռանալով):* Ախր միանգամայն արդար յուղ է… Կարծում եք խանութի՞ է…
*(Մեկուսի):* Լավ ընկանք, հա…. Էս ինչքան պիտի բերենք, որ ընդունի…

*(Ամուսինը և կինը: Ամուսինը շրջում է զայրացած):*

ԱՄՈՒՍԻՆ – Սա, սա ի՞նչ բան է…

ԿԻՆ – Գուցե ես քեզ հարցնեմ, ընկեր Գևորգյան…

ԱՄՈՒՍԻՆ – Բայց քո ազգանունն էլ կարծեմ Գևորգյան է…

ԿԻՆ – Այո, բայց Ա. Ա. չէ:

ԱՄՈՒՍԻՆ – Չէ, սա, սա երևի շատ լուրջ բան է: Սա կամ շանտաժ է, կամ պրովոկացիա…

ԿԻՆ – Հետաքրքիր է, թե ինչպես են կարողանում ապրել այն մարդիկ, որոնց համար, այ այսպես, միշտ բերում են…

ԱՄՈՒՍԻՆ – Է, ավելի հետաքրքիր չէ՞, թե մեզ նմաններն ինչպես են կարողանում ապրել:

ԿԻՆ – Լսիր, Արշակ, այնպես մի խոսիր, որ նորից սկսեմ կասկածել, թե սա հենց քեզ համար էլ նախատեսված էր…

ԱՄՈՒՍԻՆ – Այդքան միամիտ մի լինիր, Նվարդ ջան, գյուտարարին ո՞վ է բան բերողը:

*(Դռան զանգ: Ամուսինը բացում է տան դուռը: Իրար ետևից լուռ ու մունջ, առանց հարցնելու ներս են մտնում զանազան մարդիկ՝ երկու ձեռքով բռնած արկղեր: Նրանք արկղերը տեղավորում են անկյունում ու առանց որևէ բան ասելու դուրս են գալիս: Կնոջ և ամուսնու ապշահար հայացքները):*

ԱՄՈՒՍԻՆ – Սպասեք, այս ի՞նչ եք անում:

ԿԻՆ – Սա ի՞նչ բան է…

ՄԵԿԸ – Միս է, միս է: Էս մեկը տավարի ֆիլե է, էն մեկը ոչխարի չալաղաչ, էն մեկը գառան միս է, էն մյուսն էլ հավեր… Սիմոն Ակոպիչն ասաց, խոզի ասորտիմենտը վաղը կուղարկեմ…

ԿԻՆ – Օհ, ես այլևս չեմ կարող…

ԱՄՈՒՍԻՆ – Սպասեք, դուք այստեղ մսամթերքի վաճառք-ցուցահանդե՞ս եք կազմակերպում, ինչ է… Անմիջապես վերցրեք այս ամենն ու հեռացեք…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԵԿԸ – Ես փոքր մարդ եմ, ինձ ասել են տար, ես էլ բերել եմ…

*(Արագ հեռանում է):*

ԱՄՈՒՍԻՆ - *(Լացակումած):* Բայց ես չեմ ուզում, հասկանո՞ւմ եք: Անձի ազատություն կա՞… վերջապես, թե չէ:

*(Մյուսին):* Վերցրեք տարեք, խնդրում եմ… Ես թույլ չեմ տա…

ՄՅՈՒՍԸ – Մենք փոքր մարդ ենք… *(Հրում է ու դուրս գնում):*

ԱՄՈՒՍԻՆ - *(Գոռում է նրանց ետևից)*: Այո, դուք փոքր մարդիկ եք, սրիկաներ, ավազակներ, ինչո՞ւ եք ուզում գայթակղել մեր ազնիվ ընտանիքը, անազնիվներ… տեսեք, տեսեք, խեղճ կինս ինչպես է նայում այդ մսերին…

ԿԻՆ – Արշակ, բա ի՞նչ պետք է անենք, ախր սա փչացող ապրանք է…

ԱՄՈՒՍԻՆ – Փչացող չէ, Նվարդ, այլ փչացնող ապրանք է… Նրանք ուզում են փչացնել մեզ:

ԿԻՆ – Բայց գուցե դու մեկին լավություն ես արել և նա երախտահատույց է լինում: Պատահում է, չէ՞, մենք գրքերում էնքան ենք կարդացել… Հիշո՞ւմ ես Կոմս Մոնտե Քրիստոն…

ԱՄՈՒՍԻՆ – Նվարդ, ես քեզ չեմ ճանաչում… ինչե՞ր ես խոսում: Հիմա ո՞վ է լավությանը երախտահատույց լինում: Ինչ լինում է մինչև լավություն անելն է լինում միայն: Հետո ո՞վ է հիշողը…

ԿԻՆ – Իսկ դու որտեղի՞ց գիտես այդ բոլորը…

ԱՄՈՒՍԻՆ – Մենք էլ ենք գրքեր կարդացել… ֆելիետոնների…

ԿԻՆ – Սա, բայց ախր ափսոս է այս… այս… ամբողջ ապրանքը, տեր աստված…

*(Դուռը զանգում են: Կինը բացում է: Մի ձեռք է մեկնվում՝ և սենյակի հատակին է դնում երկու հսկա զամբյուղ):*

ՁԱՅՆ - *(Դռան ետևից):* Մեր նախագահ Քերոբն է ուղարկել՝ համտեսի…

ԱՄՈՒՍԻՆ – Սպասեք… *(դուռն ուժգին փակվում է):* Սրիկաներ… Համտեսի… Ի՞նչ է, այդ համտես անողը մամո՞նտ է, թե շնաձուկ:

ԿԻՆ – Եթե սա համտես է, պատկերացնում եմ, թե իսկական բերածն ինչ պետք է լինի…

ԱՄՈՒՍԻՆ – Սա՞ ինչ մղձավանջային երազ է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿԻՆ - *(Ափսոսանքով)*: Այո, երազ է…

ԱՄՈՒՍԻՆ - *(Խիստ):* Մղձավանջային…

ԿԻՆ – Այո, երազ է…

*(Դռան զանգ: Կինն ուզում է բացել):*

ԱՄՈՒՍԻՆ – Չշարժվես տեղիցդ… Սուս, ձայն չհանես… *(Անընդհատ զանգում են):* Այ այդպես, տանջվեք… ձեր հերն եմ անիծել… Հը, դուռը բացող չկա… էլ մթերք ընդունող չկա: Մեր տունը բազա՞ է, թե…

*(Դռան զանգը):*

ԿԻՆ – Լսիր, բայց գուցե բոլորովին ուրիշ մարդ է… Սպասիր, ես նայեմ դիտանցքից…

ԱՄՈՒՍԻՆ – Հենց որ ձեռքին բան տեսնես, չբացես դուռը…

ԿԻՆ - *(Հառաչելով):* Գիժ հո չե՞մ… *(Նայում է, ավելի ուշադիր):* Արշակ, ինչ-որ մի հաստլիկ, ճաղատ անծանոթ մարդ է…

ԱՄՈՒՍԻՆ – Ձեռքին, ձեռքին ի՞նչ կա…

ԿԻՆ – Կարծես թե ոչինչ էլ չկա:

ԱՄՈՒՍԻՆ – Կողքերը նայիր, ուրիշ մարդիկ չե՞ն երևում…

ԿԻՆ – Չէ, ոչ ոք չի երևում…

ԱՄՈՒՍԻՆ – Որ այդպես է, թող ներս գա:

*(Կինը բացում է դուռը: Ներս է մտնում Անծանոթը)*

ԱՆԾԱՆՈԹ – Բարև ձեզ… *(նայում է բերած արկղերին):* Բարև ձեզ…

ԱՄՈՒՍԻՆ – Բարև ձեզ, համեցեք, նստեք… Ո՞ւմ հետ պատիվ ունենք...

ԱՆԾԱՆՈԹ - *(Շարունակելով նայել արկղերին):* Ըհը, ըհը, ըհը… Այո, ժամանակն է ծանոթանալու, ձեր վերևի հարկի նոր հարևանն եմ… Գևորգյան…

ԿԻՆ – Ի՞նչ… Ուրեմն դո՞ւք եք Գևորգյանը…

ԱՆԾԱՆՈԹ – Այո, բայց դրա մեջ ի՞նչ կա…

ԿԻՆ – Գևորգյան Ա. Ա.՞…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԾԱՆՈԹ – Այո, Ա. Ա. …

ԱՄՈՒՍԻՆ – Ա՜…

ԱՆԾԱՆՈԹ – Բայց այստեղ ի՞նչ զարմանալու բան կա… Մանավանդ որ, եթե չեմ սխալվում, դուք էլ եք Գևորգյան Ա. Ա.:

ԿԻՆ – Այո, բայց մենք բոլորովին ուրիշ Գևորգյան ենք…

ԱՆԾԱՆՈԹ – Չեմ կասկածում…

ԱՄՈՒՍԻՆ – Ներեցեք, իսկ դուք ի՞նչ մասնագիտություն ունեք… Ուզում եմ ասել՝ որպես ի՞նչ եք աշխատում:

ԱՆԾԱՆՈԹ – Ե՞ս… Ես այսպես ասած՝ հսկիչ եմ, տեսուչ, այսպես ասած՝ որոշում եմ ապրանքի լավն ու վատը…

ԿԻՆ - *(Հեգնանքով):* Եվ հավանաբար լավ եք որոշում…

ԱՆԾԱՆՈԹ – Այո, ղեկավար հսկիչ եմ… Կեղծ համեստություն չեմ անի: Եվ գիտեք ինչ, ես հենց այս կապակցությամբ եմ ձեզ մոտ եկել: Իմ աշխատանքի բերումով, զանազան հիմնարկներ և անհատ անձիք պարտավոր են ինձ ապրանքի նմուշներ բերել՝ համտեսի, այսպես ասած՝ դեգուստացիա: Ես Գևորգյան Ա. Ա. եմ: Դուք էլ եք Գևորգյան Ա. Ա.: Ինձ հասցեագրված նմուշները հավանաբար ձե՞զ են բերել *(ուշադիր դիտում է արկղերը):*

ԿԻՆ – Ուրեմն սրանք են նմուշները, հա՞…

ԱՆԾԱՆՈԹ – Այո…

ԱՄՈՒՍԻՆ – Ինչ էլ հսկայական նմուշներ են…

ԱՆԾԱՆՈԹ – Այո, անհասկացող ժողովուրդ են, էլի… Ես ասում եմ՝ բերեք քիչ-քիչ, համտեսի համար, իսկ նրանք միշտ այսպես բերում լցնում են… կարծես իրենց գերին ենք… Պահելու տեղ էլ չկա… Կինս քիչ է մնում խելագարվի… Շատ անհասկացող ժողովուրդ է…

ԿԻՆ – Այո, ամեն մարդ յուրովի է խելագարվում…

ԱՆԾԱՆՈԹ – Այո, իհարկե… Ներողություն, իսկ դուք ի՞նչ եք աշխատում:

ԱՄՈՒՍԻՆ – Գյուտարար-ինժեներ եմ:

ԱՆԾԱՆՈԹ – Եվ այս մի սենյա՞կն է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿԻՆ – Այո… Չէ՞ որ ուրիշներն ավելի մեծ կարիքի մեջ են…

ԱՆԾԱՆՈԹ – Շատ եմ սիրում ձեզ նման ազնիվ մարդկանց… Իհարկե… Իսկ եթե ես ձեզ առաջարկեմ երկու սենյականոց հիանալի մի բնակարան՝ քաղաքի կենտրոնում, ի՞նչ կասեք…

ԿԻՆ – Ի՞նչ եք ասում, մի՞թե դա հնարավոր է…

ԱՆԾԱՆՈԹ – Անհնարին ի՞նչ կա… Մեր Վարդանը շենք է կառուցել… Ես կկարգադրեմ, և կփոխանակեն ձեր տունը…

ԿԻՆ – Օ, տեր աստված, Կոմս Մոնտե Քրիստո…

ԱՄՈՒՍԻՆ – Բայց ինչի՞ համար…

ԱՆԾԱՆՈԹ – Ինչպե՞ս թե ինչի համար: Մի՞թե մենք մարդ չենք, մի՞թե մեզ չեն վերաբերում այն խոսքերը, որ մարդը մարդու համար գայլ է, ներեցեք, ընդհակառակը, որ ընկեր է, բարեկամ, հարազատ: Գնացեք ապրեք, սիրելիներս, և միաժամանակ մենք կխուսափենք…

ԱՄՈՒՍԻՆ – Ա՜, Գևորգյան Ա. Ա.-ից:

ԱՆԾԱՆՈԹ – Այո, իհարկե, թե չէ անընդհատ ինձ հասցեագրված բաները ձեզ են բերելու և ձեզ հասցեագրվածները՝ ինձ…

ԿԻՆ - *(Մեկուսի)* Հա, էլի, գծագրերից բացի ուրիշ բան կստանաս… Հա, մեկ էլ պարտքերի անդորագրերը…

ԱՄՈՒՍԻՆ – Ոչ, մենք այստեղ մեզ լավ ենք զգում…

ԿԻՆ – Արշակ…

ԱՄՈՒՍԻՆ – Նվարդ, մենք այս մի սենյակում մեզ հիանալի ենք զգում:

ԿԻՆ – Դե իհարկե, տեր աստված: Ախր այսպիսի առիթ էլ երբեք չի լինի…

ԱՆԾԱՆՈԹ – Երկու սենյականոց մեկուսացված բնակարան. Հիսուն մետր, հիանալի պատշգամբներ…

ԱՄՈՒՍԻՆ – Այլևս չխոսենք այդ մասին…

ԱՆԾԱՆՈԹ – Տիկին, գոնե դուք որպես ավելի գործնական լրջախոհ… իբրև տնտեսուհի բարձրորակ…

ԱՄՈՒՍԻՆ – Իմ կնոջ հետ գործ չունեք… Նա ձեզ համար համտեսի նմուշ չէ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿԻՆ – Արշակ, խելագարվելու բան է…

ԱՄՈՒՍԻՆ – Ոչ մի խոսք: Մենք մնում ենք:

ԱՆԾԱՆՈԹ – Լավ, լավ, չխոսենք: Այդ դեպքում եկեք ուրիշ բան մտածենք: Նախկինում, ցարական կարգերի ժամանակ, շատ վատ բաների հետ, մի լավ բան կար: Նման թյուրիմացություններից խուսափելու համար, այսինքն՝ որ մեր ապրանքը ձեզ չհասներ և ընդհակառակը, մարդիկ իրենց տան դռներին ոչ միայն լրիվ գրում էին իրենց անունները, հայրանունները և ազգանունները, այլև պաշտոնները: Օրինակ - «Առաջին աստիճանի գաղտնի խորհրդական», «Դպրոցի հոգաբարձու», «Երրորդ գիլդիայի վաճառական»… Հիանալի էր: Ինչո՞ւ դուք էլ, օրինակ, ձեր դռանը չեք փակցնում.«Գևորգյան Ա. Ա., ինժեներ-գյուտարար»: Դա ի՞նչ համեստություն է: Կարող եք նույնիսկ ազգանունը չփակցնել: Միայն «ինժեներ-գյուտարար»… Հպարտ է հնչում:

ԱՄՈՒՍԻՆ - *(Տեղից բարձրանալով):* Իսկ դո՞ւք ինչ պիտի գրեք ձեր դռանը, հը՞: «Գո՞ղ», «Դրամաշո՞րթ», «Կաշառակե՞ր»… Դրանցից ո՞րը պիտի գրեք: Թե՞ բոլորն էլ միասին…

ԿԻՆ – Արշակ…

ԱՆԾԱՆՈԹ – Ինչեր եք ասում: Ես ձեզ հետ այլևս չեմ ուզում խոսել: Տվեք իմ փորձանմուշները, ես հեռանում եմ…

ԱՄՈՒՍԻՆ – Ոչինչ էլ չեք ստանա: Այս փորձանմուշները ես անմիջապես միլիցիա եմ ուղարկելու փորձաքննման: Այն ժամանակ կտեսնեք, ընկեր Ա. Ա…

ԱՆԾԱՆՈԹ – Միլիցիա՞… Ուրեմն կորանք… Ինչ կեղտոտ մարդիկ եք, ամա՛ն… Այսպիսի հարևանների հետ ապրե՞լ կլինի…

*(Արագորեն բացում է դուռը, դուրս է նետվում):*

ԿԻՆ – Սրիկա, օ, ինչ սրիկան է…

ԱՄՈՒՍԻՆ – Եվ դեռ մենք ենք կեղտոտը…

*(Դրսում ուժգին աղմուկ է լսվում, ինչ որ բաներ են քարշ տալիս):*

ԿԻՆ – Սա՞ ինչ է…

ԱՄՈՒՍԻՆ – Դռանը չմոտենաս, չբացես դուռը… Էլի բերում են…

ԿԻՆ - *(Նայելով):* Չէ, այս անգամ տանում են… Իրենք են… Տեղափոխվում են ուրեմն… Բայց խեղճը ո՞ր շենքը պետք է գնա, որտեղ գոնե երկու-երեք Գևորգյաններ չլինեն…

ԱՄՈՒՍԻՆ – Գևորգյան պետք չի որ լինի… Եթե ամեն մի շենքում երկու-երեք ազնիվ մարդ լինի միայն, նման սրիկաները ոչ մի տեղ հանգիստ չեն ունենա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿԻՆ – Այո, Արշակ…Բա հիմա ի՞նչ ենք անելու այս *(հուզված)* մածունը, կարագը, միսը, յուղը…

ԱՄՈՒՍԻՆ – Վաղը կտանեմ մեր գործարանի բանվորական ճաշարանը… Սա ախր իրոք որ մեզ է հասցեագրված… Մերն է, Նվարդ…

/ Գիդը/

ԳԻԴ – Հիմա ամեն ինչ պարզ է… հարգելի ընկերներ և միայն մի հարց է մութ – ինչո՞ւ է Աշխարհի կենտրոնի ամենահարգարժան քաղաքացիներից մեկը, մինիստրության պատասխանատու աշխատող ընկեր Անդրանիկ Լալայանը քնել հիմնարկում, գրասեղանի վրա…

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*(Ներս է մտնում կինը: Տեսնելով քնած ամուսնուն, փորձում է արթնացնել):*

ԿԻՆԸ – Անդրանիկ, Անդրանիկ, ես եմ, Մագդալինան:

ԱՄՈՒՍԻՆ - *(Տրորելով աչքերը, հանկարծ վեր է թռչում):* Ի՞նչ է, աշխատանքից ուշանո՞ւմ եմ: *(Հիասթափված):* Ախ, էլի աշխատանքի տեղում եմ, հա՞: *(Ուրախացած):* Դե՞, ի՞նչ է պատահել, չլինի՞ որևէ մեկը գնացել է և ես կարող եմ նորից տուն վերադառնալ:

ԿԻՆ – Ընդհակառակը, Անդո ջան:

ԱՄՈՒՍԻՆ – Այսինքն, ինչպե՞ս թե ընդհակառակը: Դրանից էլ ընդհակառա՞կ կլինի:

ԿԻՆ – Երևի կլինի, որ լինում է: Մորաքրոջս տղայի կնոջ հորեղբոր տղայի քենու… չէ, մորաքրոջս տղայի կնոջ հորեղբոր տղայի կնոջ քեռու… չէ… հա, հա, քեռու խնամու աղջիկն ու փեսան են եկել իրենց տղայի հետ:

ԱՄՈՒՍԻՆ – Չի կարող պատահել: Չէ, ես սրան այլևս չեմ դիմանա: Լսիր, սիրելի Մագթաղ, սա ի՞նչ բան է, երբ ամուսնանում էինք, դու ասում էիր, թե որբ եմ, որ ոչ ոք չունեմ: Իսկ հիմա պարզվում է, որ նույնիսկ մորաքրոջ տղայի կնոջ ամուսնու քեռու հորեղբոր զոքանչի խնամի էլ ունես: Մի քիչ շատ չի՞:

ԿԻՆ – Ի՞նչ անեմ, իրենք են ասում: Բայց ոչ թե մորեղբոր տղայի կնոջ ամուսնու քեռու հորեղբոր զոքանչի խնամի… Դա անհեթեթություն է: Այլ հարազատ մորաքրոջ տղայի կնոջ հարազատ հորեղբոր տղայի կնոջ հարազատ քեռու… չէ, քեռու խնամու հարազատ աղ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆ – Ի՜նչ ես ասում: Չէի կարծում, թե այդքան հարազատ ազգականներ են: Եվ է՞լ ինչ են ուզում քո ազգականները, Մագթաղ: Ասա, ասա, անուշ ջան, է՞լ ինչ են ուզում: Իմ տան ննջարանից, քո կողքից հանեցին, ճաշասենյակից հանեցին, խոհանոցից հանեցին, լողասենյակից հանեցին: Եկել եմ հիմնարկի իմ առանձնասենյակում եմ քնում: Ուզում են այստեղի՞ց էլ հանել:

ԿԻՆ – Լավ էլի, երկու ամիս չդիմանա՞նք: Ի՞նչ է, երեխաները ինստիտուտ չընդունվե՞ն:

ԱՄՈՒՍԻՆ – Թող ընդունվեն, ես ձեռքերը բռնեցի՞: Բայց ինչո՞ւ իմ հաշվին: Ինչո՞ւ պիտի ամեն տարի ամռանը ես իմ այս առանձնասենյակում քնեմ: Ինչո՞ւ երեխաների հետ ծնողներն էլ են գալիս:

ԿԻՆ – Ուրեմն իրենց երեխաներին անտե՞ր թողնեն:

ԱՄՈՒՍԻՆ – Թող հյուրանոց գնան:

ԿԻՆ – Հա, հա, մեր հյուրանոցներում էլ կանչում են «Էստի համեցեք»:

ԱՄՈՒՍԻՆ – Իսկ ես կանչում եմ, հա՞:

ԿԻՆ – Չէ, ես եմ կանչում: Լավ, Անդիկ ջան, ի՞նչ անեմ, տնից դուրս անե՞մ: Թումանյանի «Քեռի Խեչանը» կարդացե՞լ ես: Ամբողջ գյուղում խայտառակ կլինենք: Փաստորեն բոլորը հարազատներ են, մեկը մեր Բաղդասարն է իր ընտանիքով, մեկը՝ Վարազդատն է իր ընտանիքով, մեկը հորաքույր Սիրուշի տղան է, իր ընտանիքով, մեկը…

ԱՄՈՒՍԻՆ – Բա ե՞ս ինչ անեմ. ես իսկի քո հարազատը չե՞մ, որ աքսոր ես ուղարկել: Ամբողջ հիմնարկն իմ մասին է խոսում: Կարծում են լքել եմ ընտանիքս: Մի օր որ հարցս քննեն, ի՞նչ պիտի անեմ: Ո՞ւմ կարող եմ համոզել, թե պարզապես ժամանակավորապես ինձ տնից դուրս են արել՝ ընդունելության քննությունների կապակցությամբ: Լավ, բա հիմա դրանք որտե՞ղ պետք է ապրեն:

ԿԻՆ – Այ, հենց հարցն էլ այդ է, Անդրանիկ ջան: Ասում եմ, գուցե քո առանձնասեն…

ԱՄՈՒՍԻՆ – Ի՞նչ, այստեղի՞ց էլ եք հանում:

ԿԻՆ – Չէ, չէ, դա արդեն անխղճություն կլինի: Գուցե պարզապես քեզ հետ, այստեղ ապրեն, հա՞, տանը սեղանի տակ էլ տեղ չկա: Մեր Կիրակոսի աղջկա կեսարարի…

ԱՄՈՒՍԻՆ – Այստե՞ղ, այստեղ որտե՞ղ պետք է ապրեն… Ես գրասեղանի վրա՞ քնեմ, ինչ է:

ԿԻՆ – Ինչո՞ւ գրասեղանի, ինչո՞ւ ես զավեշտի վերածում: Կարող ես հաշվապահության սենյակը բացել: Առավոտը որ ձերոնք գան, մերոնք դուրս կգան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆ – Ոչ թե ձերոնք, այլ ես դուրս կգամ: Ավելի շուտ կհանեն, կպրծնեն: Տեր աստված, իսկ քո այդ մորաքրոջ զոքանչի խնամու… վոռբշչեմ, տղան, պատրաստվե՞լ է քննություններին:

ԿԻՆ - *(Կամացուկ):* Որ պատրաստված լիներ, ինչո՞ւ պիտի մեր տուն գար: Ասում են՝ քո անունը տալով են եկել: Գուցե նորից Մինաս Տիրոսիչին զանգահարես, հը՞…

ԱՄՈՒՍԻՆ – Մինաս Տիրոսիչի՞ն: Բա դու խիղճ չունե՞ս, այ Մագթաղ: Քո հարազատներից ուղիղ տասնյոթ հոգու համար զանգ եմ տվել:

ԿԻՆ – Որտեղ տասնյոթը, այնտեղ էլ տասնութը:

ԱՄՈՒՍԻՆ – Իսկ հետո տասնինն ու քսանը, չէ՞: Այս խեղճ Մինաս Տիրոսիչը հենց իմ ձայնը լսում է, իր ձայնը կտրվում է: Երեկ ասաց. իսկ լավ չի՞ լինի, հենց կնոջդ գյուղում մեր ինստիտուտի մի ֆիլիալ բացենք…

ԿԻՆ – Իսկ դու ինչո՞ւ ես ասում, որ իմ բարեկամներն են:

ԱՄՈՒՍԻՆ – Ասեմ՝ ի՞մ բարեկամներն են:

ԿԻՆ – Իսկ ի՞նչ է, իմ բարեկամները քո բարեկամները չե՞ն: Իսկ որ նրանց ուղարկած կարագն ու մածունը, լոբին ու կարտոֆիլը, սուճուխն ու ալանին ուտում ես, լա՞վ է: Գիտե՞ս, որ իմ այս մորաքրոջ տղայի կնոջ ամուսնու… վոռբշչեմ, աղջիկը քսան կիլո բուրդ է բերել: Բրդի գինը գիտե՞ս: Որ փափուկ քնում ես, գիտե՞ս ինչի վրա ես քնում:

ԱՄՈՒՍԻՆ – Գիտեմ, գրասեղանի, շատ փափուկ է:

ԿԻՆ – Դե լավ, Անդիկ ջան, սրանք վերջինն են, տեղավորի, զանգահարի Մինաս Տիրոսիչին, հա՞: Հիմա չեմ ասում, առավոտյան զանգ կտաս, հա՞…

ԱՄՈՒՍԻՆ – Հա, հա, հա…

ԿԻՆ – Իսկ ի՞նչ է, դու բարկանո՞ւմ ես:

ԱՄՈՒՍԻՆ – Ե՞ս, ե՞ս… բա ես քեզ վրա կարո՞ղ եմ բարկանալ, ես ի՞նչ իրավունք ունեմ, Մագթաղ ջան, մի մարդ, որ այդքան հարազատներ ունի…

ԿԻՆ – Հա, ապրես, Անդիկ ջան, դե գրի քննական թերթիկի համարը՝ 1614: Դիմացիր, Անդիկ ջան, մի ամիս հետո մենք նորից միասին կլինենք, հա՞…

ԱՄՈՒՍԻՆ – Հա…

ԿԻՆ – Դե, չմոռանաս զանգ տալ, 1614, հա՞, համբուրում եմ:

*(Օդային համբույր է ուղարկում, հեռանում է):*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆ – Չեմ մոռանա: *(Նստում, մտածում է, հետո հանկարծ վճռական վերցնում է լսափողը):* Ալո, Մինաս Տիրոսիչ, բարի երեկո, ավելի ճիշտ՝ բարի գիշեր: Անդրանիկն է: *(Լռում է)*: Մինաս Տիրոսիչ… *(Դադար):* Մինաս Տիրո… *(Դադար):* Մինաս Տի… *(Դադար):* Մինաս… *(Դադար):*, Մին… *(Դադար):*: Այ մարդ, սպասիր, տես ի՞նչ եմ ասում… Բոլորովին ուրիշ բան եմ ասում… Չէ, չէ, ուրեմն կնոջս, չէ, ասում եմ, ընդհակառակն եմ ասում: Մոտդ գրիր թերթիկի համարը՝ 1614, հենց ներս մտավ կկտրես… Հենց առաջին քննությունից… Հա, շատ եմ խնդրում: Եթե հնարավոր է մի ձգձգիր… էն մյուսներին էլ… չխառնես հանկարծ, համարները նորից ստուգիր, 319, 320, 321, 468, 489, 520, 676… հա՞, բոլորը հիշո՞ւմ ես… Դե, ուրեմն կտրիր, Տիրոսիչ ջան, հենց ներս մտնի կտրիր, որ ներս էլ չմտնի, կտրիր. հաջողություն քեզ: Որ չես արել, կնեղանամ, հա… Շատ եմ խնդրում: Ես քո լավությունը մինչև կյանքիս վերջը չեմ մոռանա… համբուրում եմ…

*(Օդային համբույր: Լսափողը ցած է դնում, շփում է ձեռքերը)*

*Վերջապես… վաղը, չէ, երեք օրից հետո ես իմ անկողնում կքնեմ…*

*(Երանությամբ իջեցնում է գլուխը ու զարնվում տախտակին):*

*Ա՜խ…*

**/ Գիդը/**

ԳԻԴ – Լավ լուծում գտավ: Թե չէ երևի շուտով կհայտնվեր մեր բարի դատավորի գրասենյակում: Իսկ ինչու բարի՞: Տեսեք:

**ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ**

ԴԱՏԱՎՈՐ– Ա-պա-հար-զան, ա-պա-հար-զան, ա-պա-հար-զան… Չէ, շատանում են: Եվ հաճախ որքան հիմար առիթներով: Ինչ ծանր բան է մեր գործը և երբեմն որքան թեթև է թվում ուրիշներին…

*(Դուռը բախում են)*

Մտեք…

*(Ներս է մտնում մի քաղաքացի):*

ՔԱՂԱՔԱՑԻ – Կարելի՞ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ– Մտեք, համեցեք, համեցեք… Նստեք, խնդրում եմ:

ՔԱՂԱՔԱՑԻ – Ես ձեզ մոտ…

ԴԱՏԱՎՈՐ– Ապահարզանի հարցո՞վ եք եկել…

ՔԱՂԱՔԱՑԻ – Որտեղի՞ց իմացաք: Նա՞ է զանգահարել… Հասցրել է…

ԴԱՏԱՎՈՐ– Ո՞վ՝ նա, ձեր կի՞նը: Ինձ ոչ ոք էլ չի զանգահարել, և ես, ներեցեք, դեռ նույնիսկ չգիտեմ, թե ով եք դուք…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ախ, այո՞, ներողություն, Մեսրոպ Սարգսյան… Բայց ուրեմն ինչպե՞ս իմացաք, որ ապահարզանի գործով եմ եկել:

ԴԱՏԱՎՈՐ – Պրոֆեսիոնալ զգացողություն է: Լսում եմ ձեզ:

ՔԱՂԱՔԱՑԻ – Ընկեր դատավոր, ես այլևս չեմ կարող… Ես ուզում եմ բաժանվել իմ կնոջից:

ԴԱՏԱՎՈՐ – Այո, դա արդեն գիտեմ:

ՔԱՂԱՔԱՑԻ – Եվ խնդրում եմ ինձ չհամոզել: Ի վերջո, եթե ապահարզանի վերաբերյալ օրենք կա, ուրեմն մարդիկ իրավունք ունեն բաժանվելու:

ԴԱՏԱՎՈՐ – Միանգամայն իրավացի եք:

ՔԱՂԱՔԱՑԻ – Բաներ կան, որ հանդուրժել չի կարելի, եթե չես ուզում ոտնահարված լինել:

ԴԱՏԱՎՈՐ – Ձեզ փորձել են ոտնահարե՞լ…

ՔԱՂԱՔԱՑԻ – Խոսքս զգացմունքների մասին է: Ես տանել չեմ կարող...

ԴԱՏԱՎՈՐ – Անհավատարմությո՞ւնը…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ի՞նչ անհավատարմություն… Ներեցեք, բայց դուք իմ կնոջը չեք ճանաչում և ոչ ոք…

ԴԱՏԱՎՈՐ – Քավ լիցի, ես ընդհանրապես եմ ասում…

ՔԱՂԱՔԱՑԻ – Իսկ ես ընդհանրապեսի հետ գործ չունեմ, իմ կինը բարձր բարոյականության տեր կին է… և, այնուամենայնիվ, ես պետք է բաժանվեմ նրանից…

ԴԱՏԱՎՈՐ – Երեխաներ ունե՞ք:

ՔԱՂԱՔԱՑԻ – Ունենք, բայց երեխաներն ի՞նչ կապ ունեն: Ես ալիմենտ եմ վճարելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ – Դե, դա ձեր ցանկությունից կախված չէ… Ձեզ կստիպեն վճարել:

ՔԱՂԱՔԱՑԻ – Ինչո՞ւ ստիպել, եղբայր, ես իմ կամքով եմ տալու… Երեխաներն ինչո՞ւ պիտի տուժեն իրենց մոր մեղքերի համար…

ԴԱՏԱՎՈՐ – Մեղքե՞ր… Դա արդեն հետաքրքիր է, պատմեք, խնդրեմ:

ՔԱՂԱՔԱՑԻ – Գիտեք, մի քիչ դժվար է կողմնակի մարդուն պատմել այն…

ԴԱՏԱՎՈՐ – Ինչ մեկ ամիս հետո պատմելու եք լեփ լեցուն դահլիճի առա՞ջ: Չեղավ, ընկեր Սարգսյան…

ՔԱՂԱՔԱՑԻ – Դե լավ, նախ, առանց իմ կամքը հարցնելու, կինս մի քանի օր առաջ մազերը հարդարել էր նոր ձևով…

ԴԱՏԱՎՈՐ – Ի՜նչ եք ասում…

ՔԱՂԱՔԱՑԻ – Այո, բայց միայն դա չէ, ընկերուհու հետ միասին անցյալ օրը ցերեկով կինո էին գնացել…

ԴԱՏԱՎՈՐ – Երբ դուք խնդրել էիք միասին գնալ, իսկ ինքը հրաժարվել էր, չէ՞…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ինչ եք ասում, ես կինոյի ժամանա՞կ ունեմ… Ավելին՝ իմանալով, որ ես ուզբեկական փլավ չեմ սիրում, կարծես դիտմամբ շաբաթը մեկ այդ… փլավն է եփում:

ԴԱՏԱՎՈՐ – Ի՜նչ բարքեր են… Եվ դուք փաստորեն քաղցած եք մնում:

ՔԱՂԱՔԱՑԻ – Չէ, ինձ համար ուրիշ ճաշ է եփում: Բայց հարցը դա չէ: Ինչո՞ւ է ուզբեկական փլավ եփում, իմանալով, որ ես տանել չեմ կարող այդ դեղնավուն բրինձը… Եվ ինչո՞ւ է իմ երեխաներին սովորեցնում այդ ճաշին, փաստորեն նրանց իմ դեմ գրգռելով…

ԴԱՏԱՎՈՐ – Այսինքն ինչպե՞ս է գրգռում:

ՔԱՂԱՔԱՑԻ – Այսպես. տեսնելով այդ ճաշը, ես կիտում եմ հոնքերս, իսկ երեխաներն ասես դիտմամբ ախորժակով չփչփացնում են:

ԴԱՏԱՎՈՐ – Այո, ծանր վիճակ է:

ՔԱՂԱՔԱՑԻ – Տեսնո՞ւմ եք: Հիմա ես ավելի սոսկալի բան կասեմ…

ԴԱՏԱՎՈՐ – Խնայեցեք, դուք ինձ վախեցնում եք…

ՔԱՂԱՔԱՑԻ – Նա ուզում է աշխատանքի անցնել…

ԴԱՏԱՎՈՐ – Չի կարող պատահել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՔԱՂԱՔԱՑԻ – Այո, այո, ընկեր դատավոր, նա ուզում է աշխատանքի անցնել, որովհետև գիտի, որ երբ ես տուն եմ գալիս և ինքը տանը չի լինում, ես խելագարվում եմ…

ԴԱՏԱՎՈՐ – Իսկ որտե՞ղ է լինում…

ՔԱՂԱՔԱՑԻ – Որտե՞ղ պետք է լինի, խանութում, կամ հարևանուհու մոտ…

ԴԱՏԱՎՈՐ – Այո՞… Ուրի՞շ…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ուրեմն այսքանը բավական չէ՞… Ասեմ նաև, որ խոսում է իմ լրագիր կարդալու ժամանակ… Ախ, հա, ես մոռացել էի, որ ձեր կոչումը մեզ հաշտեցնելն է… բայց ձեր ջանքերը զուր կլինեն, հասկանո՞ւմ եք, իմ վճիռը վերջնական է…

ԴԱՏԱՎՈՐ - *(Բարձրանում է տեղից):* Ի՞նչ, ձեզ հաշտեցնե՞մ, ես ձեզ հաշտեցնե՞մ… սխալվում եք, բարեկամս: Ընդհակառակը, ես սրտանց, ամբողջ հոգով համաձայն եմ ձեզ հետ…

*(Թափահարում է ձեռքը)*

ՔԱՂԱՔԱՑԻ - *(Ինքն էլ է բարձրանում)*: Ինչպես թե, ինչու…

ԴԱՏԱՎՈՐ – Ինչ-որ մեկը պետք է գնա առջևից… Այո, այս ամենին պետք է վերջ տրվի… Եվրոպայից էլ ենք անցել արդեն, առանց հարցնելու մազեր են հարդարում… Այսպես որ գնա, Հայաստանում կնոջ և տղամարդու միջև այլևս ոչ մի տարբերություն չի լինի… Առանց այդ էլ բան չի մնացել: Տվեք ձեր դիմումը, բարեկամս, շնորհավորում եմ… Ես, ես հիացած եմ ձեր համարձակությամբ…

ՔԱՂԱՔԱՑԻ – Սպասեք, բայց…

ԴԱՏԱՎՈՐ – Ի՞նչ բայց, տվեք դիմումը և գոնե… դուք երջանիկ եղեք…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ներեցեք, ուրեմն ձեր տա՞նն էլ…

ԴԱՏԱՎՈՐ – Նույնն է, նույնը, շաբաթներով գիշերները տուն չի գալիս…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ինչպե՞ս թե…

ԴԱՏԱՎՈՐ – Այնպես: Հերթապահ բժշկուհի է աշխատում… Անկեղծությանը անկեղծությամբ կպատասխանեմ, օր ու արև չունեմ: Ձեր կինը ձեր լրագիր կարդալու ժամանակ է խոսում, իսկ իմ կինը գիշերներն էլ է խոսում, գիշերները…

ՔԱՂԱՔԱՑԻ – Հերթապահության ժամանա՞կ:

ԴԱՏԱՎՈՐ – Ոչ, ոչ, քնած ժամանակ: Ուզբեկական փլավ եք ասում. հեքիաթ է: Որ ճաշը որ գովեմ, ուղիղ մեկ ամիս ամեն օր նույնն է եփում… Ավելին ասեմ՝ կոպերն ու *(ձեռքով*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

*ցույց է տալիս)* թարթիչներն էլ ներկում է… Կինո եք ասում… Առանց հարցնելու ծովափ է գնում, ծովափ… Երկու անգամ պատահաբար հանդիպել ենք Խոստայում:

ՔԱՂԱՔԱՑԻ - *(Մեկուսի)*: Փառք քեզ, տեր աստված, փառք քեզ, տեր աստված…

ԴԱՏԱՎՈՐ – Իր բարեկամները նրա աչքի լույսն են, իմը՝ փուշը: Շաբաթը մեկ նոր հագուստ է պատվիրում, մոդան չի հասցնում նրա ետևից հասնել: Ամեն տարի արտասահման է գնում և դեռ ոչ մի անգամ ինձ հետը չի տարել:

ՔԱՂԱՔԱՑԻ – Իսկ դուք ինչո՞ւ չեք բաժանվում և ամուսնանում երկրորդ անգամ:

ԴԱՏԱՎՈՐ – Սա հենց երկրորդն է: Կյանքում տեսած չկամ, որ վերնաշապիկս լվանա կամ արդուկած թաշկինակ դնի գրպանս… Է, այսինքն ի՞նչ եմ շարունակում, կարծես թե դուք չգիտեք… Ձերն էլ նույնն է, էլի…

ՔԱՂԱՔԱՑԻ – Այսինքն…

ԴԱՏԱՎՈՐ – Իսկ դուք ասում եք… հաշտեցնեմ: Ե՞ս: Ոչ: Նրանք պետք է պատժվեն… Այո, ինչ-որ մեկը պետք է գնա առջևից… Դու պետք է գնաս, դու պիոներ ես, սիրելիս…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ե՞ս…

ԴԱՏԱՎՈՐ – Տուր դիմումդ, եղբայրս, չնեղանաս, ես գիտակցաբար եմ «դու»-ով խոսում քեզ հետ, մենք գաղափարական եղբայրներ ենք… Տուր դիմումդ, անմիջապես կբաժանեմ, կմիջնորդեմ Գերագույն դատարանում, ապահով մնա…

ՔԱՂԱՔԱՑԻ – Ես, ես ուզում եմ մտածել…

ԴԱՏԱՎՈՐ – Ի՞նչ մտածել, մտածելն է կործանում մարդուն… Ես նախանձում եմ քեզ… Դիմումդ…

ՔԱՂԱՔԱՑԻ - *(Ետ-ետ գնալով):* Դ-դեռ չեմ գրել, վաղը կբերեմ…

ԴԱՏԱՎՈՐ – Ափսոս… Լավ, չմոռանաս… Տղամարդ եղիր… տղամարդ…

*(Քաղաքացին փախչում է):*

ԴԱՏԱՎՈՐ - *(Լրջանում է հանկարծ):* Դե, իհարկե, այլևս չի գա: Ահա մի ընտանիք էլ փրկեցի կործանումից: Օհ, հոգնեցի: Խեղճ տիկին Սրբուհի, տանն իր համար նստած երեխային է օրորում երևի ու մտքով էլ չի անցնում, թե ինչ եմ դարձրել իրեն: Ի՞նչ անես, անձնական օրինակը մեծ ուժ է… Օհ…

*(Լսվում է կանացի մի ձայն):*

ԿԻՆ – Կարելի՞ է: *(Ձոր):* Թույլ կտա՞ք…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - *(Լրջացած, հանգիստ):* Խնդրեմ, նստեք, տիկին…

ԿԻՆ – Ես հայցադիմում եմ բերել ապահարզանի համար:

ԴԱՏԱՎՈՐ – Անմիջապես երևում է, տիկին:

ԿԻՆ - *(Սառը):* Ինչի՞ց…

ԴԱՏԱՎՈՐ – Ապահարզանի դիմող կանայք սովորաբար խոժոռ են նայում բոլոր տղամարդկանց ընդհանրապես…

ԿԻՆ – Մի՞թե… Ո՞ր օրը կարող եք նշանակել դատը…

ԴԱՏԱՎՈՐ – Դուք հավանաբար գիտեք, որ դատարանի նպատակն է հանգամանորեն քննել բաժանման գործը և հաշտեցման հնարավոր եզրեր գտնել…

ԿԻՆ – Ես դատարանի իրավունքները գիտեմ, բայց գիտեմ նաև իմ իրավունքները…

ԴԱՏԱՎՈՐ – Ուրեմն ձեր կարծիքով ապահարզանն անխուսափելի՞ է...

ԿԻՆ – Այլապես ես հիմա դատարանում չէի լինի:

ԴԱՏԱՎՈՐ – Հիմա դուք դատարանում չեք, այլ միայն դատավորի սենյակում եք, և ես իմ պարտքն եմ համարում…

ԿԻՆ - *(Սառնորեն):* Ներեցեք, ուրեմն ե՞րբ կլինի դատը…

ԴԱՏԱՎՈՐ - *(Պաթետիկ):* Բայց մի՞թե հաշտության ոչ մի հնարավորություն չկա, տիկին…

ԿԻՆ - *(Լացակումած, պաթոսով):* Ոչ… *(Դադարից հետո, բարձրացնում է գլուխը):* Իսկ ձեր կինը կհաշտվե՞ր նման վիճակի հետ…

ԴԱՏԱՎՈՐ – Բայց ես վիճակին անծանոթ եմ դեռևս…

ԿԻՆ – Այո, այո, լավ, կասեմ…Ես… ես ահավոր պայմաններում եմ ապրում: Իմ… իմ ամուսինն աներևակայելի խանդոտ է: Պատկերացնո՞ւմ եք, նա ամեն օր գալիս ինձ աշխատանքից տուն է տանում, ինչպես, ինչպես մանկապարտեզի սանի…

ԴԱՏԱՎՈՐ – Ինչպիսի՜ հոգատարություն…

ԿԻՆ – Ինչպե՞ս… Օրական տասն անգամ զանգ է տալիս, որպեսզի ստուգի, ես տեղում եմ, թե ոչ…

ԴԱՏԱՎՈՐ - *(Օրորում է գլուխը):* Կարոտում է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿԻՆ – Կարոտո՞ւմ է, իսկ ինչո՞ւ տանն էլ չի կարոտում… Ինչո՞ւ հենց տուն եմ մտնում, իսկույն արձանանում է հեռուստացույցի առջև... Նա, նա այդ անտեր ֆուտբոլն ու հոկեյն ավելի շատ է սիրում, քան ինձ…

ԴԱՏԱՎՈՐ – Ուրեմն հոգնած է լինում…

ԿԻՆ – Հոգնած… այո, ինձ հետ միշտ հոգնած է լինում, ամիսը մեկ հազիվ եմ կարողանում համոզելով հետս կինո կամ թատրոն տանել: Իսկ ընկերները զանգեն թե չէ՝ առույգ-առույգ թռչում է… Եվ ամեն անգամ սկանդալ պետք է բարձրացնեմ, որ չգնա…

ԴԱՏԱՎՈՐ – Խեղճ կին…

ԿԻՆ – Այ, տեսնո՞ւմ եք, արդեն դուք էլ եք խղճում ինձ:

*(Թաշկինակն աչքերին է տանում):*

ԴԱՏԱՎՈՐ – Է, ես ձեզ չէ, որ խղճում եմ, տիկին, ես իմ խեղճ կնոջն եմ խղճում…

ԿԻՆ – Ձեր կնո՞ջը… Ինչո՞ւ…

ԴԱՏԱՎՈՐ – Որովհետև վերջին ֆիլմը, որ տեսել ենք «Բայջու Բավրան» է եղել, ահա թե ինչու: Որովհետև ես այնպիսի խանդոտն եմ, որ չեմ թողնում նա աշխատի և երկու հորաքրոջս էլ մեր տանն եմ պահում, որպեսզի նա տանը հանկարծ մենակ չմնա: Էհ, ես ի՞նչ մարդ եմ:

ԿԻՆ – Իսկ ի՞նքը…

ԴԱՏԱՎՈՐ – Ինքը ի՞նչ գիտե, թե ես ինչ եմ անում: Օր չկա, որ աշխատանքից հետո կամ հենց աշխատանքի ժամին ընկերներիս հետ ռեստորան չգնամ, դե, և մնացածը… Ոչ մի կոպեկ տանը չեմ թողնում, որ հանկարծ իր ուզած ձևով չծախսի… Հորաքույրներս են հացն առնում ու շուկա գնում…

ԿԻՆ – Գ-գիտեք ինչ, ձեզ մոտիկից չճանաչողը երբեք չի մտածի, թե դուք այդպիսին եք…

ԴԱՏԱՎՈՐ – Իսկ ձեր ամուսնուն չճանաչողը կմտածի՞… Տղամարդիկ բոլորն էլ մի սանրի կտավ են, ինչպես ասում է ժողովրդական իմաստուն ասացվածքը… Գոնե կարողանայի հեռու մնալ թղթախաղից:

ԿԻՆ – Ի՞նչ, դուք թղթախաղով է՞լ եք զբաղվում…

ԴԱՏԱՎՈՐ – Իսկ ինչ է, ձեր ամուսինը չի՞ զբաղվում… Վերջերս էլ բախտս բոլորովին չի բերում, հաջորդ ամսվա աշխատավարձս էլ եմ տարվել…

ԿԻՆ - *(Գլուխն օրորելով):* Ոչ, իմ ամուսինը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ – Խեղճ կնոջս մայրը հյուր էր եկել մեր տուն…Մի խոսքով... քաղաքավարի ճանապարհ դրեցի…

ԿԻՆ – Սպասեցեք, և ձեր կինը հանդուրժո՞ւմ է այդ բոլորը… Ինչո՞ւ է հաշտվում… Ինչո՞ւ չի բաժանվում և ամուսնանում երկրորդ անգամ…

ԴԱՏԱՎՈՐ – Ես նրա երրորդ ամուսինն եմ…

ԿԻՆ – Այո՞…

ԴԱՏԱՎՈՐ – Դե, ներեցեք, բացվեցի ակամա, գիտեք, դատավորն էլ մարդ է և սիրտը թեթևացնելու կարիք է զգում երբեմն… Ուրեմն այսպես… ձեր դատը կնշանակենք…

ԿԻՆ – Գիտեք, եթե շատ եք ծանրաբեռնված, գուցե ես հետո գամ…

ԴԱՏԱՎՈՐ – Ոչ, ոչ, ինչ եք ասում, այս ամիս հակառակի պես ապահարզանի ոչ մի գործ չունենք… Այնինչ, մեզանից էլ են պլան պահանջում, հասկանում եք… Տվեք ձեր դիմումը…

ԿԻՆ – Դիմո՞ւմը…*(Նայում է թղթին):* Դիմումը մոռացել եմ… շփոթել եմ… վաղը կբերեմ…

ԴԱՏԱՎՈՐ – Շատ լավ, կսպասեմ… Չմոռանաք, խնդրում եմ, գիտեք, էլի, պլանը…

*(Կինն արագորեն դուրս է գնում):*

ԴԱՏԱՎՈՐ - *(Հոգնած):* Ահա մի փրկված ընտանիք ևս… ինչպես փախավ… Հիմա տեսնես իմ մասին ինչեր է պատմելու… Ոչինչ, կարևորն այն է, որ երեխաներն անհայր չմնան: Օֆ, օֆ…

/ Գիդը/

ԳԻԴ – Անկարևոր չհամարենք ավելացնել, որ մեր բարի դատավորի գլխին շուտով սև-մութ ամպեր կուտակվեցին և ընտրողները նրան ետ կանչեցին դատավարությունից կամ ավելի ճիշտ՝ ղեկավարությունը նրան հեռացրեց աշխատանքից համաձայն իր դիմումի՝ անբարոյականության, թղթախաղով զբաղվելու և ընտանիքում անառողջ մթնոլորտ ստեղծելու համար:

Եվ մեր խեղճ էքս-դատավորը օրեր շարունակ ելնում ու իջնում էր պաշտոնական սանդուղքներով աշխատելով համոզել, թե ստել ու իրեն վարկաբեկել է հանուն ընտրողների շահերի, թե կատակել է…

Կատակել է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լավ, խոստովանեմ, որ այդ դատավորը ես էի…

Սա քեզ համար օպերետա չի – ասացին ինձ և քանի որ ես չկարողացա պաշտպանել իմ շահերը՝ ինձ նշանակեցին իրավախորհրդատու՝ ուրիշների շահերը պաշտպանելու համար: Պետք է աշխատեի մի գիտահետազոտական ինստիտուտում, որը օրենքով գոնե կիսագաղտնի պետք է լիներ, որովհետև այնտեղ աշխատում են խիստ գործնական թեմաների վրա: Դոկտորների և թեկնածուների մի մեծ խումբ փորձում էր անկորիզ ձմերուկ ստանալ: Իսկ բոլորովին ուրիշ մի այլ մեծ խումբ աշխատում էր ստանալ առանց կեղևի ձու, կաղին, ընկույզ և նուշ, որպեսզի թեթևացնի անատամ հասարակության կյանքը: Ես դիրեկտորի ընդունարանում նստած սպասում էի ընդունելության, երբ կիսաբաց դռնից լսեցի ո՞ւմ… դե իհարկե, բարեկամներ, դուք միանգամայն ճիշտ կռահեցիք, հին և խանդավառ բյուրոկրատ ընկեր Լալայանցի ձայնը:

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

ԼԱԼԱՅԱՆՑ - *(Խոսում է հեռախոսով)* Լալայանցը լսում է… այո… ը… խմբագրությունի՞ց… Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ… Ակնա՞րկ… Օոոո՛, ուզում եք ակնարկ գրել մեր ինստիտուտի աշխատողներից որևէ մեկի մասի՞ն: Խնդրեմ, կարող եք գրել ում մասին որ ուզում եք: Այո, այո, մենք այստեղ պարզապես մի ընտանիք ենք և մեզանից յուրաքանչյուրն իր ուժերի ներածի չափով աշխատում է օգտակար լինել այդ ընտանիքին: Ինչպե՞ս… դա ձեր երազանքն է, որ յուրաքանչյուր կոլեկտիվ մի ընտանի՞ք դառնա… ուրեմն մեր երազանքները համընկնում են, բարեկամս… Դե այսպես, պայմանավորվեցինք… Մենք կհավաքվենք, կխորհրդակցենք, կորոշենք և ձեզ տեղյակ կպահենք… Շատ բարի, եղավ, եղավ, բարեկամս, բարի… *(Կախում է լսափողը և սեղմում սելեկտորի կոճակը: Ներս է մտնում ԱՂՋԻԿԸ)*

ԱՂՋԻԿ – Ինչ ա, է՛, հայրիկ…

ԼԱԼԱՅԱՆՑ – Ձա՛յնդ… տանը չես: Ասա՝ լսում եմ, Սահակ Սահակիչ:

ԱՂՋԻԿ - *(Կոտրատվելով)* Լավ: Լսում եմ, Սահակ Սահակիչ…

ԼԱԼԱՅԱՆՑ – Բալիկ ջան, մի կադրերի բաժնից մայրիկիդ կանչես…

ԱՂՋԻԿ – Մայրիկը շուկա է գնացել:

ԼԱԼԱՅԱՆՑ – Իսկ ինչո՞ւ է ինքը գնում: Քրոջ երեխաներն՝ այդ կրտսեր գիտաշխատողները, պարապ-սարապ թրև են գալիս միջանցքներում: Գոնե շուկայում կծանոթանային գյուղատնտեսական մթերքների հետ: Դե լավ, ուրեմն ինձ մոտ կանչիր եղբայրներիդ, քրոջդ, հորեղբորդ, քեռուդ իր որդիներով: Մեկ էլ Աշոտին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿ – Ո՞ր Աշոտին, քեռորդի՞, թե փեսա… այսինքն թեկնածո՞ւ, թե դոկտոր:

ԼԱԼԱՅԱՆՑ – Դոկտորին, փեսա Աշոտին: Խնամի Պապայանին, քավոր Սերոբ Քերոբիչին և սանամորս:

ԱՂՋԻԿ – Այսինքն՝ ընտանեկան ակտիվը…

ԼԱԼԱՅԱՆՑ – Այո, բալիկս, այո… Ընտանի՛ք… Ախ, որքան ճիգ ու ջանք ու եռանդ պահանջվեց ինձանից, մինչև որ ինստիտուտի կոլեկտիվը մաքրելով, մաքրելով ընտանիք դարձրի: Մի ընտանիք: Մի կուռ, մի համերաշխ, իսկական ընտանիք: Դե, խնդրեմ, ընկեր թղթակիցներ, գրեք՝ ում մասին որ ուզում եք…

/ Գիդը/

ԳԻԴ – Դե, բարեկամներ, մի՞թե ես ինձ թույլ կտայի պաշտպանել ընկեր Լալայանցի շահերը: Երբե՛ք: Ավելի լավ է անցնել թոշակի և անվախ պայքարել Լալայանցի ու նրա նմանների դեմ: Անվախ, որովհետև եթե չաշխատեմ, որտեղի՞ց պիտի ինձ հեռացնեն: Եվ ամեն ինչ պետք է անեմ անձամբ, առանց քեռի Սեպուհի բանաստեղծական տաղանդին դիմելու: Թե չէ մեկ էլ տեսար քեռի Սեպուհը այնքան հալածեց ընկեր Լալայանցին, որ սա դարձավ չգիտեմ ով… Եվ այսպես, բարեկամներ, ես ձեզ ծանոթացրի Աշխարհի կենտրոնի որոշ տեսարժան վայրերի և տեսարժան ու ոչ տեսարժան մարդկանց հետ: Նրանց մի մասին դուք երևի վերջին անգամ եք տեսնում, իսկ ձեր զավակները բոլորովին չեն տեսնի: Եվ երանի նրանց: Եվ դուք մի՛ ափսոսացեք, բարեկամներ, որ քանդվում է Աշխարհի կենտրոնը: Հինն ու անպետքը պետք է քանդվի, պետք է քանդվի, այո, վերանա, որ ստեղծվի նորը, նոր քաղաքն ու նոր մարդը: Եվ մի կողմ մի՛ քաշվեք, օգնեք քանդողներին, մի քիչ էլ դո՛ւք հրեք… Դե՛, գնացի՞նք, լեդիներ ու ջենթլմեններ, տիկնայք ու պարոնայք, կամ մի խոսքով՝ հարգելի ընկերներ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org